

14700

linguistic & Ombuds

218 pumps

4-17-19 unyung-m

891.99

9-70

6/16/2



891.542-34

Կ-70

ԱՂՈՒԱՆԻ ԵՒ ՕՍԱՆԻ

Հ Ե Ք Ե Ա Թ Ը

ԳԻՆՆ Է 2 Ր. 50 Կ.

Ա Շ Խ Ա Տ Ա Ս Ի Ր Ե Յ

ՅՈՎՍԷՓ ԵՍԼՈՒՅԵՆ ԴԻՊՈԼՑՅՈՒՆՆԵՐ

(Կ Ա Ս Ա Ղ)

(Զորրոզ տպագրութիւն)

300



89891-99

4-70

✓

ԱՂՈՒԱՆԻ ԵՒ ՕՍԱՆԻ

Հ Ե Բ Ե Ա Թ Ը

325

Ա Շ Ե Ա Տ Ա Ս Ի Բ Ե Ց

ՅՈՒՆԻՔ ԸՍԼԱՆԵՆ ՆԻԿՂՈՅՈՍԵՆՑՆ

(Ա ռ ա ն ղ)

(Չորրորդ տպագրութիւն)

ՔՐԵՆ Է Զ Բ. 50 Կ.



ՅԱՌԱՋՈՒԲԱՆ

Լսեցէք ասեմ խեղահանից
 Նոր ծաղիկ գաստան իմացէք.
 Աշխատատէր այդեպանից
 Ծաղիանց Բուրաստան իմացէք:
 Բուրաստանին շատ կարօտով
 Բուրաստանը մանեմ շուտով.
 Վարդ մանուշակ քաղցր հոտով
 Ընտիր բալասան իմացէք...
 Բարասանից տամ ձեզ ընծայ,
 Էտոզ իմացողը ցընծայ.
 Բառքաօելով միշտ կ'ընծայ,
 Յատուկ պարտիզպան իմացէք...
 Յոտուկ պարտիզպանը ես եմ,
 Նախ առաջաբանը կը խօսեմ,
 Տեառյ ձեզ մի հեքեաթ ասեմ,
 Աղանն ու Օսանը իմացէք:
 Աղանն ու Օսանը գրեցի,
 Երգարանիս մէջ ղրեցի.
 Տրիու տառով զարգարեցի,
 Բցեմ տարբան իմացէք:

7131-57

Քցեմ տղարան պարունակ,
 Որ միշտ կարգացւի շարունակ.
 Տարածւի աշխարհ բարունակ,
 Նխշուն ծիածան իմացէք:
 Նխշուն ծիածանէ կամար
 Խեղբ ու միտքս եղաւ գումար,
 Իբրի յիշատակ ինձ համար
 Մինչև յաւիտեան յիշեցէք:
 Մինչև յաւիտեան կրիօսէ
 Աստուած սիրող սփ, որ լսէ
 Մէկ բերան ողորմի ասէ,
 Բաղձանքս այսքան իմացէք:
 Բաղձանքս այսքան արեցի
 Նպատակըս կատարեցի,
 Նոր հեքեաթ բացատրեցի,
 Ասեմ թւական իմացէք:
 Թւական սփ լսել կամի
 Ասեմ յարմարաւոր ժամի
 Հազար ինը հարիւր ամի
 Յունվարի քսան իմացէք:
 Յունվար ամսոյ սուրբ նըսեթ
 Սիրոս քցեց անկեղծ տէրբ.
 Մեր մեծ խնամակալ սէրը
 Կայսեր Նիկիոյան իմացէք:
 Կայսեր Նիկիոյայի ջանքը

Աստուած երկար պահէ կեանքը
 Դառնանք էջմիածնի վանքը
 Հայրիկ սրբազան իմացէք:
 Սրբազանը իւր մեծ օրով
 Սուրբ գանը վայելէ բարով
 Հայրապետներ մառման շառով
 Ծածկած գերեզման իմացէք:
 Ծածկած գերեզման փառքով
 Հաստատ մնան իրենց վարքով
 Ականջ արէք ասեմ կարգով
 Նոր հեքեաթ, նոր բան իմացէք:
 Նոր հեքեաթը շարունակող
 Ծայրէ ի ծայր պարունակող
 Սէօհիթլու զիւզի բնակող
 Յովսէփ Ասլանեան իմացէք:

ԵՂՈՒԱՆՆ ՈՒ ՕՍԸՆԵՐ

Ըստ աւանդութեան և հայոց պատմութեան համաձայն, Ռուբինեաց վերջին բարեպաշտ և ողորմած Ասն թագաւորը փախստական գնաց ի Փորից քաղաք և անդ մահացաւ. իսպառ դարձաւ և վերջացաւ թագաւորութիւնն հայոց: Իսկ իրգճալի Հայաստանը մնաց անտէր և անօգնական, անհովիւ, մոլորեալ ոչխարի նման: Արդէն շորս կողմից սկսեցին թշնամիք պաշարել Հայաստանը: Քանզել, աւիրել, զերել և ցիրուցան անել: Վերջ ի վերջոյ Հայաստանի մի մասը սիրից Պարսից շահը և միւս մասը Օսմանեան տէրութիւնը: Բայց զայով որ երկուսն էլ թունաւոր վիշապի և տգրուկի նման ծծում էին խեղճ հայոց ազգի արիւնը: Նամանաւանդ քուրդ աշէրաթները, սրոնք առանձին առանձին էլազասիներ ունէին, այսինքն ցեղապետներ և այս էլազասիքը իրեանց բոլոր քրդերով վրանաբնակ էին: Ամենեին վար, վաստակ ու աշխատանք չունէին, դարուներ ելնում էին սարերը, վրանները

էին խփում կանաչազարդ մարգագետիններին, սառ ազրիւրների ջրերը խմելով, երջանիկ կեանք էին վարում շարունակ:

Իսկ խղճալի հայերը ժրջան ու աշխատանք մըջիւնի նման գլուխը կախ արած աշխատում էին շարաշար, վարում, ցանում, հնձում և ձմեռայ պաշար էին հաւաքում: Եւ երբ ձմեռը կըզար այդ վրանաբնակ քիւրդերը կըզային հայ գիւղերի վերայ իրրև զշաղշի: Արդէն խոտի դէզը և մարագի բանալիքը կ'անցնէր քրդի իրաւանց տակը, որքան որ կամենար այնքան կըլցնէր նա իւր անասունների առաջը: Ոչ քաղել ու մէջքը ցաւցնել ունէր, ոչ կրելուն և ոչ բարթոցելուն մասնակից: Այնժամ խեղճ հայ սիրտը կըծմլէր և աղիք կզալարէր, բայց ինչ անէր, որ իրաւունքը ձեռքից տանում էր, որովհետև բաւական էր, որ մի հնչին և ստրուկ քրդի կամքից ելնէր, կամ սիրտը կտարէր, նա փաշային դանգառ անէր, թէ այս ինչ հայը ինձ բերան հայհոյեց, միւս օրը դու բեզ կախազանից կախում կտեսնէիր: Այդ դէպքում էլ ո՛վ կարող էր քրդի թանին թթու տակը — «Հայի հոցը քրդի փոր, թող ուտէ ու ման գայ բոլոր»: Քրդերը այսպէս հայերով ապրում էին մինչև որ դարուներ գալով կրկին կանաչում էր դար ու դաշար...

Այսպէս անտանելի գրութեան մէջ մնալով, հայերի յոյսը հատաւ և ոչ մի տեղից օգնութիւն չեղաւ. ուստի Ղարաբաղի Մելիքները դիմելով դէպի հիւսիսային կողմը և աղերսագրերով ներկայացան Ռուսաց մեծազօր և սղորմած Արքայից արքայ Պետրոս կայսրին: Ազգի ազատութեան առթիւ խնդրամատոյց եղան և յայտնեցին նրան հայերի կրած անտանելի վիշաք և տառապանքը: Ամենաողորմած կայսրը ընդունելով մելիքների խնդիրը, խոստացաւ իսկապէս մի այցելութիւն անել և հայոց ազգին ազատութիւն պարգևել:

Այս հիման վրայ Մելիքները ամենաողորմած կայսրից հրաման ստանալով վերադարձան և հաւարեցան Փանձակից (Գեանձա) 12 հազար հայեր և քսան հազար վրացիք իրանց Վախտանգ թագաւորի հետ: Անհամբեր ոպատում էին ուսաց զօրքի գալստեան և մեծ յոյսով սպասում էին ազատութեան ժամին: Բայց գալով, որ դժբախտաբար այդ նպատակն էլ չկատարեց, որովհետև ուսաց զօրքը եկաւ մինչև Կասպիական ծովի եզերը և այնտեղից ետ դարձաւ, որովհետև այդ ժամանակ հայոց կոյր բազմից վախճանեցաւ Օգոտափառ կայսրն ուսաց և այդ պատճառաւ հայոց խնդիրը դարձեալ մնաց անկատար: Իսկ վերոյիշեալ մելիքներն այլևս չգար-

ձան ոչ Պարսկաստան և ոչ էլ Տաճկաստան և իւրեանց ամբողջ գերդաստանով զարձան հպատակ ուսաց և բնակեցան նորա սամաններումը: Նրանք Իօն գետի եզերքում հիմնեցին Նախիջևան, Ղլար և Արմաւիշ քաղաքները ու ապրեցան խաղաղ կենօք, հանդիսա ու ապահով, շնորհիւ մեր մեծ խնամակալ և ողորմած կայսեր ուսաց: Պարսկաստանի և Տաճկաստանի հպատակ հայերը մնալով միևնոյն անտանելի գրութեան և վառ կրակի մէջ մինչև այսօր ժամանակիս:

Այդ շարաքատիկ ժամանակներում բնակւում էր Վաղարշակերա գիւղաքաղաքում մի հարուստ ու երևելի պատուական հայ իշխան Մելիքշահաբաղ անունով, Բագրատունեանց ցեղիցն էր, իսկական և պապական մելիք, այսինքն ցեղապետ: Սա իւր բոլոր կալվածքով և գերդաստանով բնակւում էր Բագրևանդ գաւառի Վաղարշակերա գիւղաքաղաքում, հանդիսա ու ապահով, մինչև անգամ Մելիքշահաբաղի հօտաղ մշակներին անգամ վարդով զարնող չկար: Այս ում շնորհիւն էր, որ այս մի մարդը, այդ Տաճկաստան երկրում ապրում էր խաղաղ, հանդիսա և ապահով: Սատիրէկ էլազասու շնորհիւ էր: Սատիրէկն էլ նոյնպէս բնակւում էր Վաղարշակերա աւանը և ունէր քսանը և չորս գիւղ իւր

ձեռքի աակը և համարեա թէ կէս թագաւորի
 չափ կարողութիւն ունէր. եօթն քաջ առիւծ
 աղերք ունէր, որոնք զինուած ժամանակ, որ հեծ-
 նում էին նժոյգ ձիանքը, էլազատու վերայ,
 որ զիմում էին, ցիրուցան էին անում և
 իւրեանց հզատակ դարձնում: Այսպիսով բոլոր
 էլազասիներու ղլխաւորը Սատիբէկն էր: Մինչև
 անգամ Օսմանեան հզօր տէրութիւնը երկիր էր
 կրում դօրանցից: Տէրութեան կարգադրած դա-
 տաւոր փաշէք դարձեալ Սատիբէկի ձեռքի աակն
 էին ապրում: Սատիբէկն էլ Մելիքշահբագի
 մտերիմ ընկերն էր և կրօնափոխ եղբայրը: Սա-
 տիբէկն քուրդ էր, իսկ Մելիքշահբագը հայ էր,
 բայց Մելիքշահբագը իւր բոլոր գերդաստանիցը
 առաւել էր սիրում Սատիբէկին, քանի որ մեծ
 երախտիք ունէր Մելիքշահբագը Սատիբէկի վե-
 բայ և մինչև անգամ կեանք էր պարգևել նրան:
 Մի ժամանակ իշխանութեան հրամանով պիտի
 խեղդաման լինէր Սատիբէկը, իբրև թագաւո-
 րագն լրտես, բայց Մելիքշահբագը ազատեց դո-
 րան այդ մահից իւր արդար վկայութեամբ և
 երեք տարի էլ իւր տան մէջ պահպանեց իւր
 հացով ու ջրով, կենդանի իւր գերտաստանին
 հասցրեց: Նոյն օրից եղան սորանք իբար հաւա-
 տարիմ եղբայր: Իսկ այժմս էլ Սատիբէկը նորս

երախտիքի փոխարէն պաշտպանում է Մելիք-
 շահբագին և նոցա խելացաւոր գործողութիւնիցը
 Մելիքշահբագն էլ միևնոյն կերպով չափա-
 ցանց կարողութեան աէր էր. երկու հազարից
 աւելի ոչխարներ ունէր, հազարից աւելի միւս-
 անասունների թիւն էր համում: Գեղեցիկ շի-
 նութիւններ ունէր մարմարօնեայ քարերով
 տաներկու ընտիր պարտէզները լիովի պտղատու
 ծառերով, երեք աղնիւ աղայ ունէր և մի համեստ
 կին, բայց կինը աղերքանց մայրը չէր, ետնակին
 էր և ամուլ: Չիմա կարող եմ ասել, որ արգան-
 զից ծնող մայրը այդ սէրը և գուժը չունէր,
 որպէս սա ունէր իւր խորթ որդոց վերայ: Ար-
 բանց դուր միշտ բաց էր օտարականների հա-
 մար և սեղանը փռած ազքատաց համար: Օրական
 հազարաւոր անձինք վայելում էին այս տան
 բարիքը և այս Մելիքշահբագի առնը համարում
 էր ինչպէս մի վանք կամ եղեմական գրախոս:
 Հայր Աբրահամու նման ոչ մի օր առանց հիւրի
 չէր մնայ՝ ինչպէս ազգասէր և հիւրընկալ:
 Մելիքշահբագը այսպէս հանգիստ, ապանով
 և երջանիկ կեանք էր վարում և բոլոր լսող իմա-
 ցողները դօրանց երանի էին առախ: Մէկ օր
 ս. Մեծանի օրհնութեան ժամանակ, Մելիքշահ-
 բագը և իւր կինը՝ այսինքն Աստղիկ տիկինը

գնացին ուխտ ս. Էջմիածին: Երբ որ վանքը հասան, հիւրընկալ վարդապետը եկաւ և ընդունեց զբանց, որովհետև բոլորը ծանօթ էին Մելիք-շահբազին: Զիանքը տարան ախօրը կապեցին և նրանց էլ մի առանձին սենեակ աւելցին, ուսումնարանից էլ մի ազայ աւելցրանց, իբրև փոքրաւոր, որպէսզի ծառայութիւն անէ նորանց մինչև իրենց տուն վերագառնալը: Բայց Մելիք-շահբազը և Սատղիկ արկինը երբոր տղային տեսան, համարեա թէ խելագարեցին և ազուշմնացին տղայի գեղեցկութեան վրայ: Ինքը դեռ տասնեւչորս տարեկան էր. հասակով երկար, մէջքը բարակ, վիզը թզաշափ կոտնկի նման, մազերը շէկլիկ և փափուկ մէտաքսի նման, ճակատը բոլորած լուսնեակի նման, սև աչքերը բազէի աչքերի նման, երեսն էր կարմիր ու սպիտակ զրախտի անշոշափելի խնձորի նման, լեզուն ճարտարախօս անուշաբարի սոխակի նման, շատրան բերանը կաթնազրիւր, ատամները մարգարիտ գուտ գոհարից կազմած, զիտմամբ գրչով սկարած սրտիկերի նման: Վերջապէս ազիսէրը գրուեց մաղնիսի նման Մելիքշահբազին և իւր կնոջ և նոքա սասցին. երանի այն ծնողաց, հազար երանի, որ այսպէս գեղեցիկ զա-

ւակ ունեն, երանի հազար երանի: Սրանք որ այսպէս հոանդով երանի աւելցին տղային, ազէն արասսօք թափելով սաստիկ լաց եղաւ: Երբ որ լալու պատճառը հարցրին, նա պատասխանեց, թէ թող ամենաճշտին և վատ պատկերի տէլ լինէի և ուրիշների բազդը ունենայի. մենակ գեղեցկութեանս վերայ էք զմայլել, արդեօք սքստիցս էլ տեղեկութիւն ունէ՞ք, թէ ի՞նչ գրութեան մէջ է: Մելիքշահբազը սասց. ընդ մատող մենք ինչ գիտենք սրտիդ մէջ ինչ կայ, ուրեմն պատմիր իմանանք: Տղէն սասց՝ ես Մակեցի Խօջանազարի միայնակ սրզին եմ տնա այս չորս տարի է, որ ես այստեղ եմ և ուսումս էլ աւարտել եմ, բայց գալով, որ իմ բաժին աշխարհս արդէն աւիրել է: Հայրս մի գեղեցիկ քոյր ունէր. իմ թանկագին հայրս ինձ այստեղ բերելուց մի տարի յետոյ պարսիկները գալիս են դորան տանելու. իսկ հայրս դեմ կայնելով չէ տալիս, կոխ է բացուում և կուռ մէջ սպանուում է մի սարևագ: Այդ պատճառով պարսից զորքը գալիս է և բոլորովին սրի է քաշում մեր ազգ ու ազգականներին և բոլոր արիւնակից բարեկամներին: Հայրս ու մայրս սպանուում են, հորաքրոջս տանում են, նոյնպէս կողոպտում և սանում են մեր եղած չեղածք, բոլոր կայք ու

Հարստութիւնը, իսկ մնացածը քանզ ու քարափ
անուժ և կրակով այրում, որդէսդի ոչ մի բան
չմննայ յետագաների համար: Ահա իմ ժամանակս
է և կէտ է և ուսումս էլ աւարակ էմ պէտք
է դուրս ելնեմ ուսումնարանից, բայց չեմ գիտէ
թէ ս'ը գնամ, որովհետև սչ մի տէր և օգնա-
կան չունիմ և եթէ այստեղ ուսումնարանը մը-
նամ, պէտք է վարդապետ լինիմ, այդպիսով էլ
հօրս ժառանգութիւնը աշխարհից կը չնջի: Այժմ
նկատեցէք և տեսէք թէ որպէս կրակ ունիմ
սրտիս մէջ, որ ոչ էրէցում և ոչ անցնում է,
այս տարաբաղդ վիճակի տիրոջ էլ ե'նչ արժան
է երանին:

Երբ այս բանը լսեց Մելիքշահբաղի կինը,
ասաց տղային, ես որ մարմնաւոր գաւակ չու-
նիմ, եկ քեզ անեմ ինձ հոգեկան գաւակ և ապ-
ջինք միտսին: Տղան ասաց, դու որ ընդունես, ես
աւելի շնորհակալ կլինեմ, իսկ ես կխօստովանեմ
մինչև մահս ձեզ ծառայել իբրև հարազատ որդի:
Կինը դառնալով դէպի իր ամուսինը ասաց՝ դու
էլ յօժանր ես: Ասաց՝ ինչու չէ, մարդ էլ չյօժա-
րի այսպէս գեղեցիկ տղայի որդեգիր անել,
համարենք թէ երեք տղայ չունենք չորս տղայ
ունենք, բայց բոլորից սիրելին սա պիտի լինի:
Նոյն բույէին ելան և տղայի երեսները համբու-


քելով բերեցին և խրեանց քովը նստեցրին և
խօստացան անել խրեանց հոգեկան որդի: Եւ
տղէն նոյնպէս ընդունեց դորանց իբրև հոգեկան
հայր ու մայր: Այս դէպքից յետոյ նոր հարցրին
ազգայի անուճը և նա պատասխանեց, թէ իմ ա-
նունս Ազուան է ձեզ ծառայ, և նորա ասին Աս-
տուճն ծառայ: Այսպէս ուրախացան երկու կող-
մըն էլ, որ կարծես թէ աշխարհը իրենց տւեցին:
Նորա այդտեղ մնացին մինչև տասը օր, այնու-
հետև ազգային վեր առնելով հետները վերագարձան
խրեանց տեղը: Երբ որ տուն հասան, բոլորը
գերդաստանով եկան սրանց ուխտը շնորհաւո-
ցին և ազգային բարևեցին: Բոլորը դարձացան
ազգայի գեղեցիկութեան վրայ և յետոյ հարցրին
ազգայի սրտեղացի լինելը: Այդ ժամանակ Մելիք-
շահբաղի կինը բոլոր գերդաստանին ասաց՝ լսե-
ցէք ես պատմեմ ձեզ, որովհետև ես մարմնօփս
ամուր էի և մարմնաւոր գաւակ չունէի, բայց
հոգով ծնայ և բերեցի այս տղին: Էջմիածնի
տուրք վանքիցը, ուրեմն բոլորը սիրեցէք դորան
իբրև հոգեկան եղբայր, էլ որտեղացի լինելը
հարկաւոր չէ: Բոլոր գերդաստանով ընդունեցին
այդ առաջարկութիւնը և սուրբ սիրով սիրեցին
խրեանց հոգեկան եղբորը:

Բայց Աստղիկ տիկինը այնպէս էր սէրը

բցել Աղւանի վերայ, որ մի բոպէ աչքի առաջից հեռանար՝ նա զիտէր թէ աշխարհը աւեր է և արեգակը խաւար իւր գլխին: Աստղիկ արկինը երբ որ գնաց ամարանոց ոչխարի վերայ, աս- բաւ իւր հետ Աղւանին, որ գառները արածեցնէ, մայր և որդին գնացին ամարանոց, որտեղ մե- նակ պատկանում էր Սատրբէկին և Մելիքշահ- բագին, որոնք որ միասին վրաններ խփում էին Ալազազ առւած ծաղկաւէտ սօրի հովտումը, որ- պիսին խոտով, ջրով լցւած և ծաղկունքով դար- դարւած դրախտանման մի սար էր: Բայց հա- զիւ բաւականացնում էր Մելիքշահբագի և Սա- տրբէկի ոչխարներին, որոնք իբրև հաւատարիմ դրացիք ազրում էին միասին և տիրում էին այդ Ալազազ առւած ամարանոցը, իբրև ազգա- պետ: Այդ ժամանակ Սատրբէկին էլ մի ան- նման, զեղեցիկ աղջիկ կար, անունը Օսան և ինքը գեռ տասներկու տարեկան էր, շափագանց զեղէլի և ոսկեթել մագերը շէկիկ, ճակատը կիսարուսին և պիսակաւոր, ունքերը՝ կամար, աչքերը՝ գամբար, երեսները՝ վարդարան, բե- բանը՝ մարմարօնեաւ շաղբան, ատամները՝ մար- ղալիք, որոնք իբրև մտճան, մասները մեղրէ մոմ, բազուկները՝ մագաղաթ, մէջքը՝ բարակ ինչպէս նոճի, ման էր գալիս ինչպէս եղնիկ,

վերջապէս սա էլ զեղեցիլութեամբ ոչ մի բա- նով պակաս չէր Աղւանից. կարծես թէ Ասուած այս երկուսին իրար համար էր սանդձել բնա- կանից:

Այս աղջիկն աւ տղէն միշտ գառ էին արա- ծացնում, ասում, խօսում և ուրախանում էին: Մի ժամանակ անցաւ. այդ միջոցին տղէն և աղ- ջիկը լաւ ծանօթանալով իրար հետ վերջի վեր- ջոյ սիրահարւեցին իրար վերայ, բայց հաւատ- ները մեծ սարի նման սահման էր մէջ տեղը, չէին կարող անցնել: Աղջիկը պահանջում էր որ տղէն դառնայ իւր կրօնքից, տղէն պահանջում էր, որ աղջիկը դառնայ Այս երկուսն էլ մէկ մէկու սիրով վառւում էին, բայց այդ կարծիքը դրանց վերայ ոչ մէկի մտքով չէր անցնի եր- բէք: Այդ ժամանակին և այդ ճաճկատան եր- կրում ով կարող էր մտածել, քանի որ հայը համարւում էր ինչպէս հող կամ եփած հաւ: Վերջապէս աղջիկը մի օր երեկոյեան անկող- նում պարկած այդ բանի համար շատ մտատան- ջութեան մէջ էր ընկղմւած, միտք անելով քու- նը քաշեց և քնաւ: Աստղիկը շուրջաւ և տխուր այդ մտքից ժամանակին յանկարծ մի տեսիլք տեսաւ. Սատրբէկը և Մելիքը իրար հարան մի լուսեղէն սենեակում, որտեղ լուսեղէն ակուններ



7131-57

էր զբաժնէ և տխուրներէ վրայ բազմել էր Յիսուս Փրկիչը, տաններկու առաքեալներով և Ասուածածին կոյսը ընդ նմա անմահական բաժակներ էին վայելուծւմ. երբոր ս. Ասուածածին կոյսը տեսու այս աղջկան, հրաւիրեց իւր մօտ և սասաց՝ այսուհետև դու իմ հարսնս ես և այս լուսեղէն պաակը քեզ համար է պատրաստւած, և յետոյ ցոյց աւեց նրան իւր սիրեցեալ և հաւատացեալ ազգի երջանիկ կեանքը. վերի երուսազէմ զբախտը, զբախտի անմահական ծառերն ու պտուղներն. նոյնպէս ցոյց աւեց նրան մահմեղականների մութ ու խաւար տեղերը տեսնով՝ թէ նրանք երբէք լոյսի երես չեն տեսնի, որովհետև աշխարհի սկզբից բոլոր մարգարէները գուշակեցին Փրկիչի դալուարը. ով որ կհաւատայ նորան և նորա միտն ու արիւնը կճաշակէ նա արդէն իւր լուսաւոր լուպտերով և լուսեղէն ճանապարհով դալիս է աստ և վայելում է այս երջանիկ կեանքը: Ի՞նչ ով որ չէ հաւատում Փրկիչին և չէ ճաշակում նորա միտ արիւնը և չունի իր ճակատի վրա մկրտութեան սուրբ դրօշը, նրանց վրայ լուսեղէն ճանապարհների դռները կը փակուի և խաւարային դռները կբացուի և խաւարային հրեշտակները կնարեն նոցա: Այս պատրուկութիւնից յետոյ սուրբ կոյսը լցրեց մի բաժակ

Վարմիր զինի ու աւեց Օսանին և սասաց. Վե՛միր այս անմահական բաժակը այս սուրբ կրօնքի և Աղւանի սիրուն, որով կարողանաս կրօնքը ընդունել, Աղւանին սիրել. առաջ կը վայելէք այն կեանքը և յետոյ այս լուսեղէն կեանքը. Շատ նեղութիւն կը քաշէք ձեր սիրահարութեան միջոցը և վերջը ձեր նպատակին կրճանիք. ձեր նպատակը կատարողը այդ բաժակն է, որ արդէն ձեռքիդ է, իմիր այդ անմահական բաժակը և գնայ հասիր նպատակիդ: Օսանը խմեց բաժակը և խկոյն քնից զարթնաւ, վեր ելաւ և եռանդը սրտի մէջ կրակի նման վառուաւ և եռանդին չզիմանալով ձեռքը տարաւ իւր շէկիկ հուսած քառասուն զիսակներից մէկը կտրեց և մի փոքրիկ սազ շինեց և սկսեց իւր երազի վերաբերմամբ երգել իւր առանձնական սենեակի մէջ, որտեղ ինքը միայնակ պարկած էր և երգեց հետեւեալ երգը.

Ձեռքս առնեմ փոքրիկ սազս

Պատմեմ երազս, երազս,

Փոխեցաւ տեսքս ու տարազս

Տեսայ երազս երազս:

Երբ կլուսանայ լուսն ու բարին,

Առնեմ գառները գնամ սարին.

Տամ աւետիք սիրահարին

Պատմեմ երազս, երազս:

Երազումս տեսայ սուրբ կոյսին
Եւ նրա որդի Յիսուսին
Փրկական սուրբ խաչը ուտին.

Այս էր երազս, երազս:
Չեոքումն ունէր գինով գաւաթ,
Լցրեց, տւեց, խմի մի հաս,
Ես էլ ընդունի լոյս հաւատ.

Այս էր երազս, երազս:
Երբ խմի միթաբուայ,
Աղւանի հետ սիրահարուայ,
Օսանն եմ, լոյսով դարդարուայ.
Այս էր երազս երազս:

Այս երգը ասաց Օսանը իւր ատանձնական
սենեակի մէջ. Ոչ ոքին յայանի շեղաւ այս բա-
նը, մինչև որ արեգակը դիպաւ և օրը բարձրա-
ցաւ: Օսանի մայրը ելաւ տեսալ, որ կէս օր է
և գառները չէր թողել Օսանը, եկաւ ձայն ար-
ւեց և ասաց՝ օրը կէս է դարձել, դու գառները
չես թողել: Օսանը ասաց. մայրիկ ջան, վառ
չունի, քնել եմ, չեմ իմացել, թող այսօր էլ
այսպէս լինի և երազի մասին ոչինչ չասաց
մօրը: Ելաւ շուտով գառները թողեց և խելա-
գարի նման գնաց: Այս կողմ այն կողմ ման
գալով Աղւանին գտաւ, տեսաւ որ գառները
թողել է և ինքը դէմ արեգական քնել է, սլառու

պառուց քրտինքը երեսի վրայ տւել է և ինքը
երազի աշխարհումն է և Օսանը սիրուն բաժակ-
ներ է վայելում միկնոյն սուրբ կոյսի ձեռքով:
Այստեղ Օսանը իւր փոքրիկ սաղը ձեռքը առաւ
այ դարթեցնէ իւր սիրահարին:

Քայլամուր եկայ մօտդ,
Զարդիւր սիրեկանս, զարդիւր,
Եուրեց ինձ անուշ հոտդ,
Զարդիւր սիրեկանս զարթիւր:

Դէմ արեգական քնել ես,
Պտուղ պտուղ քրտնել ես,
Սիրուդ համար վառուում եմ ես,
Զարդիւր սիրեկանս զարդիւր:
Սիրտս դարձել է կուփ դաշտ,
Հաւատներս իրար անձաշտ,
Ես էլ դառնում եմ խաչապաշտ,
Զարդիւր սիրեկանս զարդիւր:

Խեղճ Օսանն եմ մուր տատրակ,
Սիրտս է ընկել անշէջ կրակ,
Վառուում եմ ինչպէս թիթեռնակ,
Զարթիւր սիրեկանս զարթիւր:
Այս երգից յետոյ աղէն դարթնեց և սկսեց
ատասիկ լաց լինել: Բայց Աստուած գիտէր թէ
մաքովը ինչ անցկացաւ այդ ժամանակը: Իսկ
աղջիկը ասաց աղային, սիրելիս ինչո՞ւ ես լաց

լինում, մինչև հիմա ես պահանջում էի, որ դու
 իմ կրօնքս ընդունէիր, բայց ես այժմ ականա-
 տես լինելով ձեր ս. հաւատին և Ասուածածնի
 օգնութեամբ և ձեռնաուղթեամբ իմեցի սիրոյ
 բաժակը և կամաւ ընդունեցի ձեր ս. կրօնքը,
 էլ ինչ հարկ կայ լարու։ Արդէն ժամանակ է
 ուրախութեան, սիրենք իրար, ուրախանանք
 այսուհետև կաման ս. Ասուածածնի։

Այս ասելուց յետոյ աղէն յուզած, սրտի
 խորքերից մի ախ քաշեց, որի ծուխը զազաթ-
 նակէտից բարձրանալով մինչև երկինք հասաւ։
 Նա մտածում էր իր ապագան, մանաւանդ իր
 հոգեկան հօր ու մօր և նոցա զերգաստաններ և
 զբախտանման օջախի համար, որպէս թէ այս
 իւր պատճառաւ գուցէ մի զժրախտութիւն և
 վնաս պատահի այդ տանը և նոցա բազում երախ-
 տեաց փոխարէն լինի սաստիկ վատութիւն։ Բայց
 սիրոյ եռանդին չզիմանալով, ուստի իր ձեռքի
 փայտը սազի տեղ ձեռքը առնելով երգեց
 հետևեալ երգը։

Տ Ղ Է Ն

Սիրելիս զիւրին, առնելս դժւար,
 Յաւս սաստիկ ցաւ է, ես ինչպէս անեմ,
 Լուսաւոր արևը թւում է ինձ խաւար,
 Սիրտս կտորած նաւ է, ես ինչպէս անեմ։

Աղջիկը աղաչի միտքը հասկացաւ, որ երկիւղ
 է կրում իսլամական ցեղից, մանաւանդ Սասխ-
 բէկից և նրա որդիերանցից, ուստի սկսեց այս-
 պէս յոյս տալ նորան։

Ս Ղ Ձ Ի Կ Ը

Մի լար, մի արամիւր իմ սիրեկանս,
 Մեծ է գօրութիւնը մեծ Բըխտոսին,
 Մինչև ի մահ այս է ուխտ ու պայմանս,
 Ձոն է այսուհետև կեանքս քո մասին։

Տ Ղ Է Ն

Մտածում եմ ես իմ վերջ ու ապագան,
 Հողը, շուրը, երկիրը Տաճկաստան,
 Խեղճ հայ ազգը իսլամի դէմ իսկական,
 Ինչպէս եփած հաւ է, ես ինչպէս անեմ։

Ս Ղ Ձ Ի Կ Ը

Ասուած է պահապան մարդկանց բոլորին,
 Դանէլիս մարգարէն առիւծոց խորին,
 Ինչպէս պահեց Յովթան կէտ ձկան փորին,
 Կոնպէս թող պահպանէ նա մեր երկուսին։

Տ Ղ Է Ն

Աղճալի Աղւանն եմ տաւրակի նման,
 Մէրդ է սրտումս կրակի նման,
 Վառւում եմ այսուհետև կրակի նման,
 Սա էլ ինձ բաւ է, ես ինչպէս անեմ։

Ա Ղ Ջ Ի Կ Ը

Օսանն եմ անարատ սուրբ կոյսը սիրի,
 Մահմէզը թողնելով Յիսուսը սիրի,
 Առաքը փոխելով իսկ լոյսը սիրի,
 Յոյսով հաւատում եմ սուրբ խաչի լոյսին։
 Այս երգից յետոյ աղջիկը, որ սիրոյ վառ
 կրակով այրւած էր, ուղեցաւ գրկախառն համ-
 բուրել տղային, Ազանը չթողաւորեց և ասաց
 հետևեալ խօսքերը. «Թէև ես էլ քեզանից աւելի
 վառում եմ սիրոյ կրակով, բայց ինչ անեմ, որ
 մեր ս. Աւետարանը արգելում է մկրտածներին
 խառնել չըմկրտածներին, ոչ համբուրել և ոչ
 համբուրել, որովհետև մեր մկրտութեան ս.
 շնորհը կվերանայ մեզանից երբ որ մերձաու-
 բութիւն կունենանք որեիցէ մի այլազգի հետ.
 Ինչպէս օրինակ, արեգական շոգն մի լուսամու-
 տից ծագում է մի սենեակի մէջ և լոյս է առ-
 լիս բոլոր սենեակին, երբ որ դու մի շնչին բան
 ես զարկում լուսամուտի դէմը, այն ժամանակ
 վաղվազակի լուսաւոր շողը թանում է և մութ-
 թըն ու խաւարը պատում է նոյն սենեակը. Ահա-
 ւասիկ և նոյնպէս թոչում և վերանում է մեր
 ս. գրքովի լոյսը, որ մեզ համար անշիջանելի և
 լուսաւոր լապտեր է, թէև այժմ չի երևում։
 Բայց այս աշխարհից փոխելիս նա ինչպէս արքա-

յական կնիքով հաստատւած վիտայական է և այդ
 գրքովի դէմ բացւում են լուսեղէն դռներ և
 ճանապարհներ, գորանից սարսում և գողում են
 և փախչում օդային գիւանքը և առաջ են գա-
 լիս լուսաւոր հրեշտակներ և առաջնորդում են
 դէպի երջանիկ կեանքը — խոստացեալ տեղը,
 որում խոստացաւ Փրկիչն մեր Բրիստոս իւր
 սիրելեաց։ Բայց այնպիսիները, որոնք իւրեանց
 գրքովը չեն պահում մտքուր, նրանց լապտեր-
 ների լոյսը խաւարում է և մկրտութեան ս.
 կնիքը կեղծւում է։ Այս աշխարհից փոխելիս
 լուսաւոր ճանապարհները և լուսեղէն դռները
 փակւում են նրանց դէմը. նոյնպէս և հեռանում
 են նորանցից լուսեղէն հրեշտակները և առաջ
 են գալիս խաւարային հրեշտակները և տանում
 են ստիպմամբ մութն ու խաւար ճանապարհով
 դէպի խաւարասիրաց գունդ, որտեղ անգաղար
 լինում է լայ աչաց և կրճտել ատամանց։ Ահա այս
 է պատճառը, որ ես արգելում եմ քեզ համբու-
 րել, մինչև որ քեզ մկրտել և ս. մեծանով էլ
 գրքովի տամ և շատ յուսալի եմ, որ շուտով
 պիտի կատարւի այս խորհուրդը, որովհետև այն
 որ Աստուած զուղեաց, մի մեկնեաց է Աստու-
 բոնած բանի մէջ մարդ չի կարող մասնամուխ
 լինել, քանի որ այս սէրը մեզ տուող Աստուած է։

Նա ամեն բան կարող է կարգին հասցնել, ուրեմն աղօթենք առ Աստուած, որ տայ մեզ մի քահանայ վասն քո սուրբ մկրտութեանը: Աղջիկն ասաց.— Սյս սարի զլիին ինչ բան ունի քահանան, ուրեմն դու անձամբ գնա և մի քահանայ գտի բեր, որ ես շուտով մկրտեմ, և թէ այդպէս գորութիւն կայ մկրտութեանը... Տղէն ասաց, ես յոյս ունիմ որ այսօր կամ վաղը մեզ մի տէրտէր գայ, որսմնեալ մի օտարական և մուրացիկ տէրտէր կայ ամեն տարի կրայ այստեղ մեր վրանը և բաւականին էլ իւր ու պատնիք կտանի մօրիցս, ես նորան անցեալներում զիւզում տեսայ: Նա անպատճառ այստեղ էլ կրայ այս մօտիկ օրերս: Սյսքանով խօսակցութիւնը վերջացրին և ելան, ասոն գտնները ու գնացին:

Բայց աղջիկը, որ գնաց իւր առանձնական սենեակը, այդ բանի վերայ շատ ակնդէպ, և ետանդի գալով սագն ձեռքն առաւ ու երգեց հետեւեալ երգը.

Շատ կարօտ եմ ես վրկութեան,

Փրկիչ իմ, վրկութիւն դու ես.

Սպասում եմ մկրտութեան,

Տէր իմ մկրտութիւնը դու ես:

Մաքուր կրօնքի պատճառաւ,

Սիրեկանս համբոյր շառաւ,

Կրտէն ընկաւ սիրտս վառաւ,

Փրկիչ, իմ վրկութիւնը դու ես:

Խեղճ Օսանն եմ մէջ խաւարին,

Չգիտենալով չարն ու բարին.

Բաւ ծառայեմ օտարին,

Փրկիչ, իմ վրկութիւնը դու ես:

Սյս երգից յետոյ միւս օրը աղջիկը առաւ գտնները և գնաց դէպի սարը: Երբ որ հասաւ Աղւանին, Աղւանը աւեց աչքալոյս և ասաց թէ տէրտէրը եկել է և գիշերը մեր տանն էր և ամեն բան խոստովանաբար ասեցի նորան. նա ուրախութեամբ ընդունեց իմ խնդիրս և խոստացաւ, որ պիտի գայ և քեզի մկրտէ: Սյս ասելուց յետոյ մէկ էլ տեսան, որ տէրտէրը եկաւ, ողջունեց և նոտաւ, ապա հարցրեց աղջկան գործի եղելութիւնը և նա պատմեց մանրամասնորէն բոլոր եղելութիւնը: Երբ տէրտէրը գործի իսկութիւնը հասկացաւ և աղջկայ համահաճ յօժարութիւնը իմացաւ, արդէն մօշտոցը պատրաստի ծոցը զրած էր, ծոցից հանեց և աղջկան տարաւ մօտիկ եզած ջրի մէջ և նայեց տեսաւ, որ մի քաջ երիտասարդ սպիտակ նժոյգ ձին հեծած ման էր գալիս այդ սարը և քաղում էր թանկագին ծաղիկներ գեղի համար: Ինքը

հայ էր, բայց պարսկական ձև ունէր: Տէրտէրը
այդ երիտասարդին իւր քովը կանչեց և ասաց՝
խորհուրդ պահպանող ես թէ խորհուրդ յայտ-
նող: Երիտասարդը ասաց. — խորհուրդ կը պահեմ
մինչև մահս և գարձեալ ես կեանքիցս ու գըլ-
խիցսանցս մարդ եմ, բայց աներկիւղ, մէկն իմ,
ստեղծողից երկիւղ եմ կրում, էլ ուրիշ ոչինչ:
Տէրտէրը տեսաւ, որ իսկ իր ցանկացած մարդն
էր, յայտնեց նրան գործի հանգամանքը և աս-
աց՝ այժմ այս աղջիկը ցանկանում է մկրտել,
ես պիտի լինեմ քանանայ և դու կնքանայր:
Սիրով ընդունեց երիտասարդը և տէրտէրը կատա-
րեց մկրտութեան ս. խորհուրդը առաքելական և
հայրապետական կանոնի համաձայն և սրբալոյս
մետոնով էլ օծեց և Յիսուսի կենարար միս ու
արիւնով հաղորդեց և ապա բերեց աղէն ու
աղջիկը և միասին կանգնեցրեց, նշանադրու-
թեան կարգը կատարեց և ապա օրհնելով նոր
ծաղիկներին ասաց՝ Աստուած շնորհաւոր անի
ձեր նոր և փառաւոր նշանադրութիւնը, բարով
Թագն ու պսակի արժանանաք, աշխարհիս մէջ
բոորի պատուներ տաք և խաղաղ կենօք ապրիք,
մինչև խորին ծերութեան հասնիք, ամեն: Յետոյ
տեկաջրեց, թէ այս Աստուծոյ անօրինութիւնն
է, Աստուածածին սիրոյ բաժակ տւեց, ես մըկը-

տեցի և նշանադրութեան կարգը կատարեցի:
Իսկ ձեր պսակը կատարելու է եախկոպոս կամ
թէ իսկ և իսկ ինքը վեհափառ կաթողիկոսը:
Այս մարգարէական գուշակութիւնը արեց տէր-
տէրը: Նոյնպէս և շնորհակալութեամբ զնաց նոր
քաւոր երիտասարդը և յոյս տալով Ազանին
ասաց՝ եթէ գործդ անյաջող ելք գտաւ դու դիմէ
Ապահան քաղաքումը, ես քեզի կօզնեմ ինչպէս
էլ լինի:

Սրանից յետոյ աղէն ու աղջիկը ապրեցան
միասին, սկսեցին իրար սիրել, զրգել զրգել
և համբուրել միմեանց, որպէս մի կամք և մի
անձնաւորութիւն: Բացի այդ ևս աղէն սկսեց
աղջկան զամ տալ և կարգացնել: Բայց աղջիկը
գերբնական շնորհքով լցւած կարճ միջոցում իւր
ուսումը աւարտեց, կարգալ զրել և ամենը սո-
փորեց երեք ամիս ժամանակում: Ամարանոցից
վերադարձան զիւրը. այդ ժամանակ աղջիկը իւր
ուսման բովանդակութիւնը ստացել էր և առ-
հասարակ նամակ էր գրում Ազանին և նորա-
նից նամակ էր ստանում, Սաախբէկը մի փառա-
ւոր և ծաղկաւէտ այգի ունէր, շատրւանը մէջը,
արիւս թռչունները միշտ երգում էին,
Թագունի վարդը բացւումէր, սոխակը իր ժամա-
նակին կարգումէր և տեսնողների սիրտը զմայ-

լեցնում և քաշում էր դէպի իրան: Այս այդին մենակ Օսանի սեփական բաժինն էր, ոչ որ իրաւունք չունէր դրա այդին մանելու առանց աղջկայ կամքին: Ամարանոցից իջած ժամանակը աղջիկն ու աղէն իրար հետ միշտ զքօնում և դարձանում էին այգում և մանաւանդ մի նոճի ծառի տակ:

Բայց գալով աղէն երբեմն ուրախանում էր և երբեմն էլ շատ սաստիկ տխրում էր: Տըխրութեան պատճառը այս էր, որ նա մտածում էր թէ այս մարդիկ, այսինքն Մելիքշահազը և իւր բոլոր գերդաստունը ինձ որդիական սիրով կըսիրեն և հայրական ինամքով կտիրեն և բացի ինձանից օրական հազարաւոր օտարականներ և աղքատներ պահւում, կերակրում և պատուարւում են այդ օջախի մէջ, գուցէ այս իմ պատճառով իզուր փաստի և փշանայ աւիրի և մինչև անգամ ամբողջ գերդաստունը սրի ճարակ դառնայ: Աղւանին կըսէր երկու կողմից էր այրում, մէկը այս կողմից էր և մէկը Օսանի սիրոյ կրակն էր, որ միշտ անշէջ վառում էր սրտի մէջ, երկուսն էլ մէկը մէկուց զօրեղ ու գերազանց:

Եւ այս դէպքում մի օր Մելիքշահազը տղային արտում ու տխուր տեսաւ, նա կարծեց

թէ իր բաժին աշխարհը պէտք է դառել և արեգակը խաւար իւր գլխին, և յետոյ կարծես թէ իւր տանիցն էր առաջացել այդ դէպքը, որպէս թէ մէկը մի անպատիւ բան է ասել Աղւանին, և այդ պատճառով կանչեց իր բոլոր գերդաստունը և հարց ու փորց արեց, որ ոչ մէկը մի բան չէր ասել Աղւանին, որովհետև ամենքն էլ աչքի լոյսից անելի էին սիրում Աղւանին: Յետոյ Մելիքշահազը Աղւանից հարցրեց իր տխրութեան պատճառը, նա էլ հազար խելքի տէր և բնագէտ տղայ էր, մի յարմարաւոր պատասխանով բաւականութիւն տւեց Մելիքշահազին և ուրախացրեց նրա սիրտը, փարատեց կարծիքը և ճամբու զրեց: Ինքն իրան մտածելով ասաց, — այս տխրութիւնը ինձ օգուտ չի բերէ, բացի փաստից, և իւր սրտի վերայ երգեց հետևեալ երգը:

Բաւականէ՛ դու հոգիս հանես,
Քեզի քեզի իզուր սրտիկ
Օրբտօօրէ ինձ սպանես,

Առանց սուրբերու սուր սրտիկ:
Նման նա գարնան գետերուն,
Մառախլապատ մեծ սարերուն.
Ամառ, ձմեռ, աշուն, գարուն,
Միշտ տրտում ու տխուր սրտիկ:

Յուսա դու քո ստեղծողը,
 Բաց արա երեսիդ քօզը,
 Զւարճանայ քեզ տեսնողը,

Կուր Աղւանիս դու լուր սրտիկ:

Աղւանի և Օսանի սիրահարութիւնը տեսց
 այդպէս երեք տարի ժամանակ, բայց ոչ ոք չիմա-
 ցաւ գորանց սիրահարւած լինելը. աղէն եղաւ
 տասնհեօթ տարեկան, իսկ աղջիկը տասնուհինգ:
 Արդէն աղջկայ ուզողները բազմացան և չորս
 կողմէն խնդրակներ էր, որ գալիս էին, որք ազա,
 որք բէկ, որք խան: Իսկ աղջիկն ու աղէն էլ
 յարմար ժամանակի էին սպասում, որ մի կողմ
 փախչէին: Ընդհակառակն այդ ժամանակին Մե-
 լիքշահարազը իր սովորութեան համաձայն պա-
 տրաստել էր երկու հազար զլուի ոչխար ծա-
 խելու համար և նա Աղւանին տասց.— Պատրաս-
 տելիք, որ միասին տանենք և վաճառենք, որով-
 հետե դու գրեւ կարգալ-դիտես և հաշի էլ գլուխ
 ես. վեց հովիւ ունենք, նորա սխարը քշում են,
 իսկ մենք ձիաները հեծած հեակները գնում ենք,
 որտեղ որ մեզ ձեռք տեսց, ախտեղ կը վաճա-
 րենք և ետ դառնալով կզանք: Տղէն հօր խօսքը
 չկտորեց ամօթուն համաձայնաւ նրա հետ զնալու,
 բայց շատ շաւ կհամարէր, որ այդ խօսքի փո-
 խարէն մի հրացանի զնդակ զարնէիր սրտի մէջը:

Վերջապէս աղէն այդ հիման վերայ մի արխ-
 րալի նամակ գրեց աղջկան, որ գայ պարտէզ
 իրար տեսնին, որովհետև օտարութիւն է գնում:
 Այս նամակը տարան և հասցրին աղջկան և նա
 բաց արեց կարգաց, երբ իմացաւ նամակի
 միտքը, սիրտը մզկտաց, աչքերը արտասունքով
 լցւած՝ խելքը զլիւիցը թուաւ և խելագարի նման
 ուշաթափ գետին ընկաւ: Վերջ ի վերջոյ ելաւ
 ախուր արտում պարտէզ զնաց, նա ծաածուժ
 էր թէ Աղւանը, որ զնայ ամենաքիչը մի տարի
 կուշանայ: Իմ էլ օրս մէկ է, պատգամարոնները
 հազար ու մէկ, իհարկէ հայրս մէկին պիտի տայ
 ինձ, իսկ ես ոչ տէր ունեմ և ոչ օգնական,
 պէտք է ես ինքս ինձի սպանեմ, որ ապաստեմ,
 դրանով էլ անձնասպան կլինեմ և հոգով կը
 կորչեմ, ու այսպէս յուսահատւած եկաւ ախուր
 ու արտում նոճի ծառի տակը նստաւ և սկսեց
 լալ և աչքերից արեան արտատուք թափել: Մտ
 թող այստեղ իւր տխրութեան մէջը մնայ, մենք
 դառնանք զէպի Աղւանը: Աղւանը տասց հօրը՝
 հայրիկ ջան, դու զնայ հասիր հովիւներին, ես մի
 տեղ եմ գնալու, զնամ և շուտով կը դամ քեզ կը
 հասնեմ: Սրանից յետոյ Աղւանը ձին հեծաւ,
 զնաց խաւով ինչ զեղեցիկ սաղ զնեց և ուղ-
 գակի պարսպի դուռը ձին կապեց և ինքը մտաւ

պարտիզի մէջ և տեսաւ, որ Օսանը արտում
տխուր նստել էր նոճի ծառի տակը. Աղւանը
իւր սաղս ձեռքն առաւ, որ մնաս բարև առ
իւր սիրելի Օսանին:

Արի տեսնեմ ազնիւ ընկեր
Մնաս բարեաւ ես գնում եմ,
Գուցէ փատանայ վերջը մեր,
Մնաս բարեաւ ես գնում եմ...

Աղջիկն էլ իւր սաղս առաւ, որպէս թէ ես
դարձնէ Աղւանին այդ ճանապարհից

Ա Ղ Զ Ի Կ Ը

Ով իմ ընտիր սիրեկանս
Արի մի գնայ, մի գնայ.
Անգին թանկագին իշխանս
Դարձիր, մի գնայ մի գնայ:

Տ Ղ Է Ն

Արի անենք ուխտ ու պայման
Մինչև ի կէտ վերջի մահւան
Երբէք չխախտուի սահման,
Մնաս բարեաւ ես գնում եմ:

Ա Ղ Զ Ի Կ Ը

Ձեռք յօժարի ես այդ բանին,
Այդպիսի անխիղճ պայմանին.
Կեանքս մատաղ իմ Աղւանին,
Դարձիր, մի գնայ մի գնայ:

Տ Ղ Է Ն

Աղւանն եմ արտում, տխուր եմ,
Այս բողբոս քեզի հիւր եմ.
Բեր երեսներդ համբուրեմ,
Մնաս բարեաւ ես գնում եմ:
Ա Ղ Զ Ի Կ Ը

Պեղճ Օսանիս բան դժւար է,
Սիրես Ատուած միտիթարէ,
Մեքոյ՛ ի կեանքս քեզ համար է,
Դարձիր, մի գնայ մի գնայ:

Այս կրկնից յետոյ աղջիկը ազնորորմ աղեր-
սանօք աղագահեց և պաղատեց ազային, որ
դառնայ այդ ճանապարհից և չգնայ, բայց տղէն
աղետալի և վշտալի կերպով ասաց աղջկան՝ ան-
կարելի բան է որ չգնամ, որովհետև հօրս խա-
բել, ճանապարհ եմ քցել, էլ ինչպէս կլինի, որ
չգնամ հասնեմ նորան, գուցէ բարին այս է: Գը-
նամ, լինի որ այն կողմերը մի ապաստան էլ
դանեմ կամաւն Աստուծոյ և դամ քեզ էլ տա-
նեմ: Աղջիկը արիւն արտասուր թափելով և
ստառիկ լաց լինելով ասաց՝ դու գնում ես և
ինձ թողնում ի մէջ այս քանասար գայլոց. ես
ինչպէս ապատեմ կեանքս դորանցից, անա դու
տեսնում ես, որ օրական տասը պատգամաւոր
են գայիս հօրս մօտը, ինչպէ՛ մէկին պիտի

տայ ինձի, իսկ ես ոչ տէր ունեմ և ոչ օգնա-
 կան, ինչպէս անեմ, ուրեմն զնում ես ինձ էք
 հետդ տար և ազատէ, եթէ ոչ ես կարող եմ ինձ
 սպանելով ազատ անել գորանցից, որովհետե
 ես շատ յօժար եմ մանանալու, քան թէ իսլամի
 ազգից մարդ առնելու, բայց սորանից էլ ուրիշ
 հնար չունիմ: Այս խօսքերից աղէն յուզւած ե
 աչքերը արտասուենքով լցւած և լայազին դէմ-
 քով ասաց. սիրելի Օսան ջան, Ասաւած ողոր-
 մած է, մի դուռը որ փակէ միւսը կրանայ, հիմա
 քեզ տանել չի լինի, որովհետև հեաներս երկու
 հազար զուխ ոչխար կայ, հայրս և վեց հոգիս
 մենք էլ հետը կլինենք մի ամբողջ կարաւան,
 էլ ինչպէս կարելի է ծածուկ դնալ և ազատեք
 Սաաիբէկի ձեռքից. կուգես որ փոխանակ մեր
 արեան ուրիշների արեան էլ պարտական լինենք:
 Հիմա ես գնում եմ, մի ժամանակից յետոյ կը-
 գամ քեզ էլ կըտանեմ: Վերջապէս աղջկայ բանը
 շատ դժւար էր. գնալը վոյ էր, քնալը վոյ էր,
 ուստի ասաց աղջիկը՝ այս բանը մեր խելք ու
 մաքից դուրս է, թող ս. Ասաւածածնի բարե-
 խօսութեամբ Յիսուս տէրը անօրինէ: Այս
 ասելուց յետոյ աղջիկը հանեց իւր մատից ոսկի
 մատանին և աղայի աչքերը համբուրելով ասաց.
 իմ սիրելի Աղւան ջան, անա առ այս իմ մա-

տանիս քեզ մօտ և պահէ իբրև աւանդ և սուրբ
 սիրոյ յիշատակ. երբ ինձ կարօտես, յատուկ
 քեզ մօտ յիմանաս և եթէ մի փորձանք պատանի
 փափազդ դորանով ստանաս, մխիթարւիս և ան-
 մխիթար չմնաս: Նոյնպէս էլ աղէն իւր մատա-
 նին տւեց աղջկան և երկու սիրահար սոխակ
 իրար փաթաթեցան, վերջին հրաժեշտական համ-
 բոյրները տալով միմեանց և երկու կողմից էլ
 հեղեղի նման արտասուքը թափուում էր. բաւա-
 կանին լայուց յետոյ, Ասաւու դէմ կրկին ուխտ
 ու պայման կապեցին և երգմամբ հաստատեցին,
 որ մինչև անգամ և այդ սահմանից յետ չդառ-
 նան և երբէք մէկ մէկու չմտնան: Աղւանը
 Օսանին յանձնարարեց այդ կանաչազարդ նոճի
 ծառին և ասաց՝ այսուհետև այս ծառով կըլարձա-
 նաս մինչև իմ վերազառնայս, առ քեզ գայտերս
 տէրն արտացէ և զմեզ կրկին միմեանց տեսու-
 թեան արժանացնէ ամեն: Այս ասելուց յետոյ
 բաժանւան իրարուց, բայց ինչպիսի բաժանու-
 թիւն, ինչպէս հոգին մարմնից բաժանուի, աղջի-
 կը լայով մնաց և աղէն լայով գնաց: Գնաց ար-
 դէն հասաւ հօրը, շարունակեցին իւրեանց ճանա-
 պարհը, մենք գառնանք դէպի տարաբաղդ աղ-
 ջիկը և տեսնենք թէ ինչ գրութեան մէջ էր:
 Աղձալի Օսանը դարձաւ ինչպէս մի բնաւէր

Քուշուն, որ անօթեան թափառում է, փրօքը դառաւ ինչպէս արեկօծեալ ծով կամ դաբնանալին գետ. գիշեր ցերեկ քուն ու դադարում չունէր, անհանգչելի կրակով վառոււմ էր շարունակ, ոչ խորհրդակից ընկեր ունէր, որ հետք խօսէր ու սրտի տխրութիւնը փարատէր և ոչ կարող էր մէկին յայտնել իւր ցաւը, ոչ աէր ունէր և ոչ օգնական, վերջապէս Օսանը իւր սեր ներս էր արել և սպիտակը դուրսը, ինչպէս այն դաբնանային կարմիր կակաչների նման, սրտնց գրսի կողմից փայլ է տալիս ինչպէս արեգակը և միջի նիւթը սևագոյն է քան գործելու մուրը: Յյգպէս էր մեր խղճալի Օսանի վիճակը: Ինքը տարակուսւած օր ու գիշեր կեանքը մաշելով, ախ քաշելով ապրում էր անմխիթար և անհամբեր սպասում Աղւանին, բայց ինչ կատես, որ Օսանի ձայնը հռչակել էր ամբողջ երկրում և այդ պատճառաւ պատգամաւորն անպակաս էր: Սատխբէկի տանիցն ամեն օր Օսանին տեսնող և ուզող էր գալիս: Վերջի անգամ եկաւ և ուզեց Օսանին Տիկրանակերտ քաղաքի Քեարիմ փաշէն և ժամանակ որոշեցին, որ գան և Օսանին տանեն: Օսանը արդէն կրակւած անտառի նման վառվոռելով մնաց, տուն կգնար սիրելի չէր տեսնի, այգին կգնար նոյն

տէս, Յղւանից էլ ոչ նամակ կտանար և ոչ էլ նամակ գրել կլինէր, որովհետև չէր գիտէ թէ քրտեղ է կամ որտեղ չէ: Եւ այսպէս արտում տխուր այգու մէջ մանգալած ժամանակին եռանդի գալով սազը ձեռքը առաւ և երգեց հետեւեալ երգը:

Խեղճ սիրունից անօղնական
 Թողեցիր անճար գնացիր,
 Մնընկեր տաարակի նման
 Խիստ անմխիթար գնացիր:
 Յիրտս մառախլապատ տօթ է,
 Ստեմ յատուկ մահւան բօթ է,
 Ճանապարհդ անծանօթ է,
 Սշխարհէ աշխարհ գնացիր:
 Վարդի կարօտ սոխակ դառար,
 Համ ինձ վառիր, համ դու վառար,
 Կարմիր վարդից փափագ չառար,
 Բաժանւար ջոկար գնացիր:
 Դու գնացիր օտար երկիր,
 Ոչ նամակ կտանամ և ոչ գիր,
 Խեղճ Օսանիս անտէր թողիր
 Անգին սիրահար գնացիր:
 Ազջիկը թող այտեղ անմխիթար լաց լինի
 իւր բազախ վերայ և սպասէ Աղւանի ձանա-

պարծր: Մենք ընթերցողը տանենք զէպի մեր
ոչխարավաճառականները:

Պարոն վաճառականները այժմ հասել էին
Հալէպ քաղաքի մէջը և հօկիւմներն էլ կէս մասը
վաճառել էին և կէսը մնացել էր. մի քանի օր
այդտեղ մնալուց յետոյ, զուրս ելան այդտեղից
և անցկենալով քաղաքից քաղաք, դիւզից դիւզ,
մի քանի օրից յետոյ հասան Պարսկաստանի
Սպահան մայրաքաղաքը, և այդտեղ մի լու
սենեակ վարձեցին և նստան ու սկսեցին իւր-
եանց առևտուրն անել: Բայց դորանց այդտեղից
զուրս գալու ութ ամիս ժամանակը լրացաւ:
Աղւանը տի էր քաշում մուխը երկինք բար-
ձրանում, բայց ինչ անէր, որ ձեռքը հնար
չկար, ոչ կարող էր իւր զաւը հօրը յայտնել և
ոչ կարող էր այցելութիւն գտնել և երբոր
եռանգը գալիս էր, նա մի առանձին տեղ թաք-
նւում և երբում էր վառվառն երգեր, սրտի
տխրութիւնը փարատում և աղա գալիս էր հօր
մօտը: Ինչպէս որ ընկել էին ճասապարհ, Աղ-
ւանի սովորութիւնը այդպէս էր, շարունակ նոյն-
պէս և այսօր Սպահանի մէջ Օսմանից բաժանման
ցաւալի անցքը միտքը ընկաւ, առանձնացաւ մի
լու շինութեան պարսպի պատի տակը նստաւ
և արեան արատաւք թափելով շատ սաստիկ

լաց եղաւ և եղկեյի սրտով սազը ձեռքը առաւ
և երգեց հետեեալ երգը, իւր օտարութեան
վերայ:

Ազնիւ ընկերիցս հեռացայ,
եկայ մնացի օտարութիւն.
Միրեկեացս կարօտացայ,
Նստայ լացի օտարութիւն:
Սիրաս վշտալի բնից
Ձեռք քաշելով եկայ անից,
Զօկնւայ իմ սիրեկանից,
Ընկայ մնացի օտարութիւն.
Վերքեր ունեմ առանցի դեղ,
Թիթեւի պէս վառւա անմեղ.
Ես այստեղ, սիրունիս այնտեղ,
Լու հասկացի օտարութիւն:
եկայ ընկայ օտար աշխարհ,
Երկինք վրէս մութ ու խաւար.
Աղւանն եմ հաստատ սիրահար,
Վերքս բացի օտարութիւն:

Աղւանի այս անմխիթար լալու և տխրալի
երգելուն ներկայ էր Նաւրշահի հօրեգրօր որդի
Մուրադխանի կին Նազրիկ տիկինը, սրալիսին
թէև պարսկի կին էր, բայց հայի ազնիկ էր. ոս
իւր պարտի լուսամուտից նայում էր ազային.

տեսնում և լուսւմ էք նորա ազեապի երգը և
 ապրական լաց ու կազան, այնպէս որ մինչև
 անգամ ինքը իւր պալատի մէջ սկսեց արտա-
 սուք թափել և լաց լինել, բայց ազային յայանի-
 շէր նորա ներկայ լինելը: Այս կինը իւր ծառա-
 ներից մէկը ուղարկեց և ազային կանչելով իւր
 քովը բերեց. Երբ տղէն ներկայացաւ այս գեր-
 ազնիւ տիկնոջը, խոնարհաբար գլուխ տուեց և
 ոտքի վերայ կայնեց, տիկինը հրամայեց՝ նստաւ,
 բայց աչքերը գեռ արտասուքով լիքն էին: Տի-
 կինը հարցրեց՝ քեզ մտաաղ, ցաւերդ ինչ է որ
 այսպէս անմոխթար լաց ես լինում և մինչև
 անգամ ինձ էլ քեզ հետ լացուցիր: Տղէն լուս
 կեցաւ և ոչ մի պատասխան չուեց: Տիկինը
 կրկնեց, թէ մի երկիւղ անէ, ևս էլ քեզ նման
 հայ եմ և հայի աղջիկ եմ, բայց պարտկի կին
 եմ: Տղէն ս. ազդեցութեամբ իմացաւ, որ եթէ
 իրան մի այցելու լինի, այս տիկնոջ ձեռքովը
 պիտի լինի, ուստի պատասխանեց՝ գերագնիւ
 տիկին, մայրիկ ջան, ես իմ ցաւս լեզուով չեմ
 կարող պատմել, սազով պէտք է ասել. սազը
 ձեռքը առաւ և սկսեց երգով հասկացնել, որ
 ինքը սաստիկ սիրահարւած սիրահար է:

Էսէ պատմեմ քեզի լալուս պատճառը,
 Կուրացել եմ, իմ Օտանս ողբում եմ,

Գայլին պահեմ տեղ իմ անձեզ գառը,
 Մասնում եմ ես իմ բանս, ողբում եմ:

Մեծ է ասուպանքս այս օտարութիւն,
 Հալեց մաշեց կեանքս այս օտարութիւն,
 Զուր է ազերսանքս այս օտարութիւն,
 Մի անելով պատուականս ողբում եմ:
 Անբուժելի ցաւագեար եմ մայրիկ ջան
 Գիշեր ցերեկ միշտ խաւար եմ մայրիկ ջան:
 Առեմ յատուկ սիրահար եմ մայրիկ ջան,
 Միտքս ընկաւ սիրականս ողբում եմ:
 Ահա այս է սաստիկ ցաւը Ազուանիս,
 Կտարւած է սիրոյ նուր Ազուանիս,
 Լացն ու կոծն է մեծ համբուր Ազուանիս,
 Միշտ յիշելով հոգեհանս ողբում եմ:

Երբ որ Ազուան անունը լսեց թէ չէ այդ
 կինը, ջերմ սիրով գրկեց և համբուրեց ազայի
 երեսները և ասաց՝ աւագ աչքերս կուրանայ, չէ
 որ դուն իմ սիրելի եղբօր որդին ես և իմ պատ-
 ճառաւ քո հայրդ ըսպանեցաւ. ահա բոլորդ
 յայանի եղաւ, որ այս տիկինը Ազուանի հօրա-
 քոյրն էր. բաւականին լալուց յետոյ, նոր հար-
 ցրեց ազայից այդ գործի եզելութիւնը և նա
 պատմեց բոլոր եզելութիւնը մի առ մի և երբ
 որ տիկինը այս հանգամանքը հասկացաւ, ազա-

յին ասաց՝ ուրեմն ես քեզի այստեղ կպահեմ Մելիքշահաբազից, թող նա ուր որ կամի որոնէ, երբ որ չգտաւ պիտի թողնէ երթայ իւր տեղը, ինքզինքն այնտեղ էլ պիտի առէ կորաւ կամ անհետացաւ. այնուհետեւ ես քեզ հետ մի մարդ կընեմ, որ գնաք և թո սիրուհիդ բերէք: Մի այնպէս ընկեր պահեմ քեզ, որ հազար ձիաւորի միջից խլէ սիրուհիդ բերէ և քեզ հասուցանէ և գարձեալ այնպէս բան անենք, որ ոչ Մելիքշահաբազին վնաս պատահի և ոչ նրա կայք ու կարողութեանը, որ նորա երախտիքը և արած բարեբարութիւնն իզուր չկորչի: Եւ այդպէս էլ արեց. երբ որ իւր մարդը, այսինքն Մուրադիանը, առն եկաւ, կինը խնդրեց և ասաց՝ այս իմ եղբորս որդին է, եկել է որ ինձ տեսնի, բայց ես խնդրում եմ, որ ուղարկես Մազկոցայ սարն ամարանոցում ձիանքն արածացնէ ամսական վարձով, որպէսզի մի քանի կողակի փող վաւտակէ: Մուրադ խանը համաձայնեց և տղային ուղարկեցին ամարանոցը: Բայց իջարձայրն ասաց տղային. քեզ նրա համար կուղարկեմ, որ լաւ ձր հեծնել և որսորդութիւն սովորես, նայնպէս նա հրացանածգութիւն սովորես, որ վերջը քեզ պէտք կգայ սիրուհիդ բերելու ժամանակ. եւ այդ նպատակով տղէն գնաց ամարանոց և սկսեց

ձի արածացնել, հեծնել և հրացանը ձեռին մը. որսորդութիւն անել և երբեմն էլ ետանդի դալով, սազ զարկել և երգ ստել ու այդ պատճառաւ ամառանոցում գտնուող մարդիկ բոլորը սիրում էին Աղւանին և վարդի նման պահում էին նրան: Իսկ Մելիքշահաբազը ահասաւ, որ արդէն բոլորովին կորաւ, շատ ման եկաւ այս ու այն կողմը և բաւականին էլ փող ծախսեց, բայց իզուր անցաւ, կորածը չգտնեց: Վերջ ի վերջոյ Մելիքշահաբազը տրտում ու տխուր դուրս ելաւ Աղւանն քաղաքից և ախ ու հառաչանք քաշելով գնաց իւր տեղը: Երբ որ հասաւ իւր տունը, հարցրին, թէ Աղւանն ուր է: Նա էլ ուրիշ բան չկարողացաւ տսել, միայն լալով ասաց թէ, յանկարծ անյայտացաւ և բոլորովին կորաւ: Նոյն կէտին դուռում գոչում ընկաւ առնը և Աստղիկ տիկնոջ ուշքը գնաց, որովհետեւ նորա մեռած համարեցին, չհաւատացին թէ կորել է: Էլ չեմ կարող պատմել, թէ ինչպէս ըսց ու կոծ և սուգ արեցին բոլոր տունը. մանաւանդ բոլոր հասաւտարաբազդ Օսանին. խղճալու ճրագը մարաւ և աչքերի լոյսը կարաւ, ձեռքում մի պարան առած դէպի այգին գնաց, որ պարանոցը գցէ և խեղդաման լինի և տգտաւ իսլամների ձեռքից, մանաւանդ, որ այդ ժամանակ Օսանին հայրը

Վնասեալ և տուել էր Տիրգրանակերտ քաղաքի Քեարիմ
 փաշայի տղին: Բայց Օսանը սողատում էր,
 որպէս թէ Աղւանը գայ և իրան տանի ազատէ:
 Բայց Աղւանի փոխարէն ստացաւ այդ բոլորներ
 չուրբ: Էլ ինչ յոյսով պիտի ապրէր այդ սարս-
 քապդ աղջիկը և այսպէս յուսահատուած Օսանը
 որորտիդի մէջ լալով ման էր դալիս, վարդերէց,
 ծառերից և ծաղիկներից շնորհակալութիւն ա-
 նում և ասում էր. իմ սիրելի Աղւանիս վարդեր,
 ծառեր և տունիկեր, մնաք բարե. ինձ թողութիւն
 արեք. ես պէտք զնամ իմ սիրելի Աղւանիս
 հասնեմ այն աշխարհում. և այսպէս եկաւ, պա-
 քանը գցեց ծառը և կամեցաւ, որ օգակը գցէր
 վիզը խեղդաման լինէր: Բայց Օսանն այդտեղ
 շատ դժւարացաւ, քանի որ կեանքը մարդուս
 համար շատ անուշ է, ուստի տխուր ձայնով
 քրքեց հեանեայ տխրալի երգը:

Յոյսուհետե իմ ողջ մնալս իզուր է,
 Բաժանուաւ միայնակ տղարակս զնաց.
 Իրշեր ու գօր սիրտս արտում-տխուր է,
 Լոյս արեղակ, թանկազին քարս զնաց:
 Անգութ բազրը գլխիս վերայ խփեց քար,
 Ինձ անելով սև հողի հետ հաւասար.
 Փափագս սրտումս մնաց անկատար,
 Խաւարաւ բոլորակ լուսնեակս զնաց:

Լուսնեակս խաւարաւ, ճբագս մարաւ,
 Անբազդիս փշապատ բանդումը արաւ:
 Նոր թագուհի վարդս կարկուտը տարաւ,
 Թոռումաւ մանիշակ սոխակս զնաց:
 Գնաց սոխակ, աչքս ձամբէն ոլորեամ,
 Չեօքս ծոցս՝ մնացեր եմ մոլորեամ,
 Ազճալի Օսանն եմ, փառւած-բոլորեամ,
 Արտումս աւերակ, հագեակս զնաց:
 Այս երգն ասելուց յետոյ Օսանի հայրը
 մարդ էր ուղարկել: Եկան և Օսանին առան զնա-
 ցին, թէ հայրդ քեզ կանչում է: Օսանը զնաց,
 տեսաւ որ իր կեսբարն էր եկել, այսինքն Քեա-
 րիմ փաշէն. այդտեղ ծառայութիւն արեց գրանց,
 մինչև որ քնեցին և ապա ինքն էլ տխու հառա-
 շանքով զնաց քնեց: Բայց քնած տեղը երազին
 Ասուածամէին կոյնն եկաւ և ասաց. ինչու այդ-
 պէս յուսահատ կլինես, ես քեզ բաժակ տալու
 ժամանակ շատցի, որ դուք անպատճառ պէտք
 է իրար վայելէք: Ահա քեզ ասեմ հաստատը, որ
 Աղւանը կենդանի Ծաղկոցասար աւաժ ամա-
 քանոցում որսորդութեամբ է պարապում և ժա-
 մանակի սպասում, որ գայ քեզի սանէ և եթէ
 շատ ուշացաւ, դու կարող ես նամակով բերել:
 Տեսոյ ձեռքերը հայրու նման արաւ և Օսանին
 ասաց՝ նայիր: Օսանը նայեց, տեսաւ իւր սիրել-

լի Աղւանին և ուրախ-ուրախ զնաց թեր զցեց
 Աղւանի վզովը, որպէս թէ նրա երեսն համբու-
 րէր: Մէկ էլ զարթնեց, վեր ելաւ և տեսաւ,
 որ պիտի տակի բարձն ընկել էր թեի տակ փոխա-
 նակ Աղւանի վզին: Օսանը սկզբում շատ ախրեց
 և յետոյ շատ, շատ ու շատ ուրախացաւ, փառք
 տալով Աստուծո՛ւ՝ զօճացաւ, որ այդ բանն իրան
 յայտնեց և հաստատ իմացաւ, որ Աղւանը ողջ
 է, պիտի գայ անպատճառ, այդ ժասին ետանդի
 գալով սաղն առաւ և երգեց այսպէս:

Երազիս մէջ, քնածս տեղ,
 Տեսայ իմ Աղւանիս, տեսայ.
 Գլուելով պատկերը շքեղ,
 Տեսայ սիրականս, տեսայ:

Աղւանս գալու է արդէն,
 Կեանքս ազատեց թակարդէն,
 Սոխակ եմ կարօտով վարդէն,
 Վարդով վարդարանս տեսայ:

Վաս լուրերով շատ խոստացայ,
 Այսօր տեսայ հանգստացայ,
 Նոր հողի, նոր կեանք ստացայ,
 Տեսայ պատուականս, տեսայ:

Օսանիս երազն էր բարին,
 Գլուելով իւր սիրահարին,

Աչքս մնաց ճանապարհին,
 Տեսայ իմ իշխանս, տեսայ:

Այս երգից յետոյ Օսանը զնաց ներկայացաւ
 իր հօրը և կնարարին և երբ իմացաւ կնարարի
 գալու նպատակը, որ պատուիրում է Սատրաբէկին
 թէ պատրաստութիւն տես, որ երկու շարտից
 յետոյ ձիաւորները պիտի գան և հարսը տանեն:
 Այս բանը որ իմացաւ, Օսանը իւր նպատակը
 կատարելու համար զնաց և յիտուն օր ժամա-
 նակ խնդրեց թէ հօրից և թէ կնարարից, ասելով
 թէ՛ իմ օժիտս դեռ պակաս է և իմ ձեռագործ
 թաշկինակներս անկատար են, որով կտրուպա-
 նամ լրացնել իմ օժիտի պակասը: Օսանի այս
 խնդիրը սիրով ընդունեցին թէ հայրը և թէ կնո-
 րարը և յիտուն օր ժամանակ տեցին նրան:

Այնուհետև Օսանը հաւատարիմ մարդ էր
 փնտրում, որ նամակ ուղարկէր Աղւանին: Բայց
 այս բանը շատ զժուար էր Օսանի համար, քանի
 որ չէր կարող հաւատա ընծայել ոչ ոքի, վախելով,
 որ նամակն Աղւանին հասցնելու փոխարէն հօրը
 կամ կնարարին տային. ուստի ազօթելով յանձ-
 նարարեց այդ բանը սուրբ կոյսին: Միւս օրը
 պատահեց նրան այն աէրաէրը, որ նրան մկրդ-
 տեց և նշանադրութեան կարգը կատարեց: Օսանը
 աէրաէրին տանելուն պէս, ուրախ-ուրախ զնաց,

աջն առաւ, ընդունեց և աարաւ այգին պատու-
ւոր կերպով հիւրասիրեց և յետոյ յայտնեց՝ դործի
հանդամանքը և ասաց՝ հիմա նամա՛լ պիտի ու-
ղարկեմ, տանող չկայ: Ասուած քեզ սեղաբնէց,
որ իմ նամակս հասցնես սիրալիանիս, Սպանան
քաղաքի Ծաղկոցասար ամարանոցում: Տէրտէրը
սիրով ընդունեց և ասաց. դէ՛հ, նամակդ գրիբ՝
մի ուշացնիր, որ ժամանակ չանցնի և Օսանը
սազը ձեռքն առաւ և տէրտէրին ասաց՝ ինչ որ
կասեմ գրէ և տուր Աղւանին:

Գիշեր ցերեկ մըշա քաշելով ախ ու վախ,
Թանկագին սիրելիս, շուտով եկ հասիր,
Փոխել է վիճակս, ձախ է դառէ ձախս,
Պատուական սիրելիս, շուտով եկ հասիր:
Նշանել են ինձի ասեմ համարձակ,
Քեզ համար յիսունն օր առայ ժամանակ,
Արտասուք թափելով դրում եմ նամակ,
Պատուական սիրելիս, շուտով եկ հասիր:
Խղճալի Օսանն եմ, լալով գրեցի,
Մեր սուրբ ուխտ ու պայման մտաբերեցի,
Յառակ նշանելս բացատրեցի,
Թանկագին սիրելիս, շուտով եկ հասիր:
Այս երգն ասեց, նամակը գրեց և երգը գը-
նելով նամակի մէջ, տւեց տէրտէրին: Նոյնպէս
բաւախանին ճանապարհածախս տւեց տէրտէրին

և սեղաբնէց դէպի Աղւանը և ինքն անհամբեր
սպասում էր Աղւանի ճանապարհը: Թող Օսանը
ճանապարհին սպասելով մնայ, մենք նամակը
տանենք տէրտէրի հետ: Տէրտէրը շարունակեց
իւր ճանապարհը և գնաց, Ասուած իրան բարի
ճանապարհ տայ:

Իսկ մենք գնանք ջրատար Աղւանի մօտը:
Այդ ժամանակ Աղւանի սիրտը շատ էր տխրել
և նպատակ ունէր դառնալ իւր տեղը, որովհետեւ
գիշեր ու ցերեկ այլու՛մ էր Օսանի վառ կրակով
և այդ տխրութեան վերայ երգեց հետևեալ երգը
իրան յուսադրելով:

Սիրանար մոլորւած սրտիկ
Մի տխրի, սրտիկ մի տխրի.
Կրակւած բոլորւած սրտիկ
Մի տխրի, սրտիկ մի տխրի:
Սիրաս արիւնով լցւած է,
Մանկութիւնէ շուրախացած է,
Սուրբ Ասուածը ողորմած է,
Մի տխրի, սրտիկ մի տխրի:
Սիրտս լցեց արիւն կուգայ,
Տրտում ու տխուր կուգայ,
Աւեր բանն Ասուած կհոգայ,
Մի տխրի, սրտիկ մի տխրի:
Աղւանիս գուր աշխատանք է

Կրածներս տառապանք է,
Համբերութիւնը մարդուս կեանք է,
Մի տիրի սրտիկ մի տիրի:

Այս երգից յետոյ տէրտէրը հասաւ այդտեղ
և նամակը յանձնեց Աղւանին: Նա գնաց իւր ա-
ռանձնական սենեակը: Երբ բաց արեց ու կար-
դաց, սիրտը մղկտաց և աչքերը արտասուներով
լցւան, կրակն ընկաւ սիրտը և թիթեռի նման
վառւեցաւ և ասաց՝ աւսող հազար աւաղ, որ սի-
րուհիս ձեռքէս գնաց: Յետոյ տէրտէրին ասաց
երանի թէ այս նամակի փոխարէն մի բաժակ
թոյն բերէիր ես խմէի ու մեանէի և չսէի այս
բոժարեր լուրը: Այժմ դու գնաց հասիր Օսանին
և օգնէ նրան, մինչև որ ես գնամ հօրաքոյրիս
մօտ և մի օգնութիւն խնդրեմ, զուցէ դամ
հասնիմ, զուցէ ոչ:

Սրանից յետոյ ելաւ տիտուր արտում դէպի
հօրաքրոջ տունը գնաց: Տեսաւ հօրաքոյրը տանը
չէր, նրա ծառաներին ասաց՝ մայրիկս որտեղ
է, սրովհետև մայրիկ էր կանչում հօրաքրոջը,
ասացին բազմիք է գնացել հիմա կգայ: Աղւանը
սղաւորի նման նստաւ ու աչքերից թափեց բա-
րէ կարկուտի նման արտասուք և այդ տիրու-
թեան մէջն ընկաւ ու քնաւ: Հօրաքոյրը բազմի-
քով ելաւ, տեսաւ որ աղէն եկել և քնել է:

բայց նրա կրակեւած սրտից տեղեակ չէր: Նա
ուրիշ ժամանակների նման հացի ու կերակրե-
լու պատրաստութիւն տեսաւ: Երբ աղէն դար-
թնաւ, մայրը հաց դրեց և ասաց՝ հաց կեք
Աղւան ջան: Աղւանը հացը տարաւ բերանը
թէ չէ, ցած չգնաց, բլին կպաւ: Մայրը տեսաւ,
որ աղի դրութիւնը բոլորովին փոխւած էր,
ասաց, Աղւան ջան, հաց կեր, մի տրամի,
Ասուած ողորմած է: Իսկ Աղւանը հացի փո-
խարէն, սազը ձեռքը առաւ և ասաց այս երգը:

Միրուհուց եկել է նամակ

Քիտտ արտում ու տիտուր մայրիկ,

Միրոս ընկել անշէջ կրակ,

Ինչպէս հնոցի հուր, մայրիկ:

Քնձ կանչել է իմ տիրուհիս,

Գեղեցկագոյն ընկերուհիս:

Օտարք տանում են սիրուհիս

Ասա մնայս է իզուր, մայրիկ:

Գնամ իմ սիրուհուս հասնեմ,

Գանեմ մէկ երեսը տեսնեմ:

Մահեան ճանապարհի կէսն եմ

Ինչ կանեմ հաց ու ջուր մայրիկ:

Այս նամակը սիրոս խոցեց,

Վիրաւորեց վէրքս բացեց:

Հաց ու ջրիս տեղը լցեց

Միրաս դարձել մրուր, մայրիկ,

Աղւանն եմ էլ չունեմ հնար.

Միրես Ասուած արա մէկ ճար,

Հեռու ընկաւ իմ ճանապարհը,

Տուր ինձ մի ընկեր, տուր մայրիկ:

Այս երգից յետոյ նամակը կարգաց հորա-
քրոջ մօտ և ամեն բան հասկացրեց նրան, որ
տասնութինգ օր է մնացել ժամանակ, եթէ այդ
միջոցը չհասնի, արդէն սիրունիս ձեռքից կգնայ:
Յետոյ մայրը ասաց՝ դէ հիմա էլ դու մի կայ-
նի, գնա ձիանքներէց ջոկէ երկու հաս լաւ
նժոյգ ձի առ արի, մինչև որ դու գաս, ես քեզ
մի քաջ ընկեր կը գտնեմ, որ իմիասին գնաք և
բերէք սիրունիդ: Տղէն գնաց ամարանոցը ձիան-
քը բերելու, իսկ մայրը իւր ծառաներից մէկը
ուղարկեց և այդ քաջ երիտասարդին բերել
ուեց, որի անունը քաջ Վարազդատ էր, նա
շատ քաղաքներ և գիւղեր աւերել էր և այդ
պատճառով պարսիկները Չուլուքեար էին կան-
չում նրան, որովհետև պարսիկ և տաճիկ աղգե-
րի հոգէառ զրոյն էր: Մինչև անգամ խաները
ու բէգերը դորա ձեռքը կդողային: Երբ որ այս
երիտասարդը ներկայացաւ այս գերագին տիկ-
նոջը և նորա կանչելու պատճառը իմացաւ,
շատ ուրախանալով ասաց՝ անաւասիկ ետանգի

եկայ, որովհետև վաղուց ի վեր է, որ սուրս
արեան կարօտ է. մանաւանդ որ իմացաւ թէ
հայի տղայ և տաճիկ աղջիկ են, Վարազդատը ասաց՝
անա ես խոստանում եմ, որ այդ աղջիկը եր-
կինք լինի, գետին իջնի, իմ ձեռքէցս չի կարող
ազատուել, որպէս էլ լինի ես կբերեմ, մինչև
այստեղ բերելը իմ պարտականութիւնս է, բայց
որ այստեղ հասուցի, էլ ես չեմ կարող օգնել,
այնուհետև քո պարտականութիւնդ է: Տիկինը
ասաց՝ դու բեր հասուր այստեղ և գնա քո բա-
նիդ: Աղւանը իսկոյն ձիանքը բերեց, մէկ ձիու
անունը ցոլակ էր, միւսը լալագար: Երբ որ
Վարազդատն ու Աղւանը իրար երես տեսան,
ճանաչեցին իրար, որովհետև օտայն երիտասարդն
էր որ Օսանի մկրտութեան եղաւ քուոր: Այ-
նուհետև երկուսը միասին հեծան ձիանքը իբրև
բարեկամ: Վարազդատը հեծաւ լալագարին, Աղւա-
նը հեծաւ ցոլակ ձին, Ասուած կանչեցին և ճա-
նապարհ ընկան: Մրանք թող շարունակեն իրենց
ճանապարհը, մենք դառնանք դէպի տարաբախտ
Օսանը և տեսնենք թէ ինչ դրութեան մէջ է:
Խղճալի Օսանի աչքերը ծուած Աղւանի
ճանապարհն նայելով եկաւ յիսուն օրը լրացաւ,
Աղւանը չեկաւ և փոխանակ Աղւանի եկան
Տիգրանակերտ քաղաքից Քեարիմ փաշի ձիա-

ւորները, Օսանին տանելու, մօտ հինգ վեց հարիւր ձիաւոր, տասներկու ձեռք դահուլչուսնայ, քսանչորս ձեռք սազ ու սանթուր, ձի խաղացնելով և ուրախութեան մեծ հանդիսով խուռն բազմութեամբ ներկայացան Սատիւրէկի գաւթում: Չիանը տարան զրացիք, իսկ ձիաւորները բոլորը հաւաքեցին Սատիւրէկի պատրաստած սեղանի շուրջը: Ամառ ժամանակ էր և լուսնեակ գիշեր: վրաններ խփեցին ծաղկունքով զարդարւած կալերը և սկսեցին ուրախութիւն անել, որովհետև հրաւիրեալները մէջ ամեն ազգերից էլ գտնուում էր՝ հայ, քուրդ, թուրք, ջհուղ, արաբ, և այլն, կերուխում և ուրախութիւն էին անում: Հայերը զինի և օղի էին իմում, միւս ազգերը թէյ և արաբիայի սուրճ, աշուղները սազ էին անում և երգ ասում, գահուլչուսնայիք պար էին անում, աղջիկները և հարսները խաղում, խաղացուր փահլէվանը մի կողմն էր խաղում, գոտեմարտ փահլէվանը կող էր բռնում, վերջապէս էլ ով կարող էր պատմել այս հարսանեաց ուրախութիւնը: Բայց այս ուրախութեան ծաղիկը, որի պատճառով կազմուել էր այս հանդէսը — տարաբաղդ Օսանը սգոյ գգեստները հագած, ձեռքերը ծոցում գրած, մտնւան դեղի բաժակը ձեռքում, մոլորւած տատարակի նման այգում նստած իւր բազդն էր լա-

ցիս և մտածում էր թէ զուցէ իմ տեսած երազը սուտ լինի, եթէ ոչ տնա յիսուն օրը լրացաւ, օր նամակ եմ ուղարկել, ինչնու չեկաւ հասաւ Ահա գայլ ու գազաններ, բոլորը գումարւել են, որ ինձի կուլ տան, էլ ո՞վ կարող է ազատել ինձի դորանց ճանկերից, ուրեմն ես պիտի ինձի ազատեմ այդ մարդակեր գազաններից այս մահւան բաժակովս: Այսպէս տրտում տխուր եկաւ նոճի ծառի տակը նստաւ, որանդ միշտ նստել էր իւր սիրելի Աղւանի հետ և յիշելով իւր անցած երջանիկ օրերը հաղեալի կերպով սաստիկ լաց եղաւ և մահւան բաժակը առաւ ձեռքը, որ խմէ ու ապառւէր իսլամների ձեռքից: Բայց կարծես թէ եռանդը ստիպեց Օսանին թէ այդ նոճի ծառից էլ հարց արաւ և ազատ բաժակը վայելէ: Բաժակը ձեռքից ցած դրեց և սազը ձեռքն առաւ և երգեց հետեւեալ երգը՝
 նոճի ծառից հարցնելով իւր սիրահարի տեղը՝
 եկել են իսլամները ինձի տանելու
 Սիրուն նոճի սիրականս սրտեղ է.
 Լոյս հաւատից կամին ինձի հանելու.
 Սիրուն նոճի սիրականս սրտեղ է.
 Ես եմ նստել քովդ սիրականիս հետ,
 Անգութ բախար սրախ մէջ խփեց նետ.
 Պտորեբայ սիրտս գտաւ գարնան գետ,
 Սիրուն նոճի սիրականս սրտեղ է:

Ո՛ւր է չի երևում հոգուս տատրակը,
 Միրտա ընկել վառուում է անշէջ կրակը,
 Խաւարեր է այսօր իմ արեգակը,
 Միրուն նոճի սիրականս սրտեղէ:
 Միրուն նոճի բաւ է թողնես ինձ տխուր,
 Միրես Աստուած դուն էլ խօսի մի հատ լուր,
 Տուր անբաղդ Օսանիս մի աւետիկ տուր,
 Միրուն նոճի սիրականս սրտեղ է:

Այս երգը վերջացնելու պէս, Աղւանն ու
 Վարազդատը հասան այդու դուռը, Վարազդատը
 ձիանքը բռնեց, Աղւանը մտաւ այգին և բարե
 աւեց Օսանին, իսկ Օսանը տեսաւ որ Աղւանն
 էր, էլ ուրախութիւնից լեզուով բարե շնորհ
 սաղը ձեռքն առաւ և երգեց հետևեալ երգը:

Աղջիկը

Ով իմ ընտիր պատւական հիւր
 Բարով հազար բարի եկար,
 Վառ կրակէս ցանեցիր ջուր
 Վազտին շատ յարմարի եկար:

Տղէն

Լսեցի, որ հարս են արել
 Հարսանիք անելու եկայ,
 Նորից սիրական ես ձարել
 Հաստատ իմանալու եկայ:

Աղջիկը

Քեզի բերեց Յիսուս տէրը,
 Առաւածածին տիրամէրը,
 Ինձ էրէցում էր քո սէրը,
 Բարով հազար բարի եկար:
 Տղէն

Եկայ պէտք է կրկին զնամ,
 Եթէ Տէրը անէ խնամ,
 Մինչև առաւօտ կմնամ,
 Վերջին բարնս տալու եկայ:

Աղջիկը

Տէրն կատարեց բողձանքս,
 Անտես չարաւ աղերսանքս,
 Ոտքերիդ տակ զոհէ կեանքս,
 Բարով հազար բարով եկար:
 Տղէն

Այս գիշեր հարսանիկ կանեն,
 Բոլորը մեծաւ որ իշխան են,
 Առաւօտուն քեզ կտանեն,
 Փիւղից հանելու եկայ:

Աղջիկը

Օսանն եմ քեզ հետ միաբան,
 Ինչ կանեմ մեծաւ որ իշխան,
 Գու ես իմ սրտի սիրեկան,
 Բարով հազար բարի եկար:

Տ Գ Է Ն

Արի գնանք Պարսկաստան
 Մայրաքաղաքն Սպահան,
 Աղանին հաստատ սիրական
 Յատուկ քեզ ամենելու եկայ:

Երգը վերջացնելուց յետոյ փաթաթւեցին իրար և սկսեցին սիրոյ համբոյրներ տալ միմեանց: Վերջ ի վերջոյ, Աղանը նայեց և տեսաւ, որ բաժակը ծաւի տակը զբւած էր, հարցուց Օսանին՝ թէ այս ինչ բաժակ է, Օսանը պատասխանեց թէ՛ իմ սիրելի Աղան ջան, սա մահւան դեղ է, եթէ մի քանի օր էլ ուշ գայիր, արդէն գաբաղիս կհաննէիր, բայց փառք Արարչին՝ որ մեզ կրկին միմեանց տեսութեան արժանացուց և յոյս ունեմ, որ էլ չզգտի բաժանուենք իրարից մինչև ի մահ:

Արանից յետոյ ձիանները քաշեցին այդու մէջ կապեցին: Օսանն ասաց՝ նստեցէք, գնամ ձեզ համար հաց բերեմ կերէք ու վեր կենամ գնանք քանի որ նրանց գլուխը խառնակ է և ժամանակն էլ լուսնակ պիշեր է: Վարազդասան տտայ՝ ես գաղտագողի բան չեմ անիլ, ես պէտք է գնամ հարսանիք, լոյսը բացւի նոր գամ և գնամ, ով որ կարող է թող գայ իմ դէմ, գայից վատեցող մարդը ոչխար չի պահի և լող չգիտցող

մարդը խօր ջրից հեռու կմնայ ես որ նրանից երկիւղ անեմ, էլ ինչու: Սպահանից այստեղ եկայ Սյո ասելուց յետոյ առաւ աղանին և զնաց այդ հարսանեաց խմբի մէջ, որ անազին բազմութիւն էր հաւաքել և ուսող-ուսողին էր խմող-խմողին. ոմանք էլ կերան, խմեցին և յետոյ զնացին աշուղների խմբի մէջ, տեսան, որ բաւականին փող է հաւաքել և տատերիւ աշուղ նստած երգ էին ասում, բայց մի աշուղ յազթել էր բողբոլին և սաղերն առել էր ձեռքերից և կամենում էր նրանց հաւաքած փողն էլ սեփականել, բայց նստող մարդիկը, որ տեսան սղանին սաղը ձեռքին, ասացին այն աշուղին թէ՛ սպասիր, փողերը մի հաւաքէ, անա մի նոր աշուղ էլ եկաւ: Այն աշուղը պատասխանեց թէ՛ թող նա էլ գայ և սազն ինձ տալով երթայ: Վարազդասան ասաց այն աշուղին. որ այգքան յուսայի ես քեզանից, թող առաջ իմ աշուղս մի բան ասէ, թէ դու գուռը տւեցիր, նորա սազն առ և փողերդ վերցրու քեզ լինի, իսկ եթէ չբարոզացար, այն ժամանակ դու քո սազն և հաւաքած փողերդ սուր նորան: Այդ խօսքին բոլորը հաւանեցին և իրաւունք տւեցին Աղանին, որ երգէ. Աղանն ասաց հետևեալ թաճիփօր:

Այն ինչ տուն է հրաշայի անունով,

Տան բոլոր անկիւններն հաստատ եմ ասում,
Տանոււէրն ճշմարիտ արդար գոյնով,
Միշտ անուամ անտեսից զանգատ եմ ասում:
Տան զաւթուամբ կայ մի հարազատ սոխակ,
Միշտ ամեն օր երգում լաւ ու վատ սոխակ,
Ունի դոնապաններ շարադատ սոխակ,
Իռուն երկու փեղկէն պալատ եմ ասում:
Ազան ասում սրտի արտաքին ձեր,
Ունի սպիտակ ու սև արտաքին ձեր,
Անտատ ունի վերև արտաքին ձեր,
Անտառին անտէր և արմատ եմ ասում:

Այս հարցական երգը որ ասաց, աշուղները լուսած մնացին և չկարողացան պատասխան տալ պատասխանի փոխարէն սագերը տւեցին և այդ հաւազուած փողերն, իսկ Ազանը սագերն ընծայեց աշուղներին և փողերը լցրեց իւր գրպանը: Առաւօտեան արշալոյսը մօտեցաւ, Վարազդատն ասաց՝ վեր կաց, զնանք, բաւական է մնանք և այդտեղից վեր ելան և զնացին այգին, որտեղ անհամբեր սպասում էր դրանց սիրելի Օսանը: Եկան ձիանքը սորքեցին, այդ ժամանակ Օսանն էլ իր հօր նժոյգ ձիանքներից մի ձի էր բերել: Երեքը միասին Ասուած կանչեցին և ճանապարհ ընկան: Բայց մի քիչ որ հեռացան գիւղից, մի քանի մարդիկ պատահեցան դրանց: Վարազդատն

ասաց այդ մարդկանց թէ՛ զնացէք Քեարիմ փաշային ասացէք, որ երկու հոգի փախցրին հարսիդ և տարան: Այդ մարդիկը եկան յայտնեցին Քեարիմ փաշային, թէ երկու հոգի հարսիդ փախցրին տարան և մեզ ասացին թէ, զնացէք, ասացէք նրան: Այդ ժամանակ նոր փնտրեցին, այս ու այն կողմն ընկան, այգու մէջ նայեցին և վերջապէս ոչ մի տեղ չգտան Օսանին և ապա հաստատ իմացան, որ այդ գոյժը ճշմարիտ էր: Այդ ժամանակ Քեարիմ փաշան և Սատխբէկը սաստիկ վիրաւորուած և զինուած ամբողջ ձիաւորներով ընկան փախչողների յետևից, բայց մի քիչ որ գիւղից հեռացան, ճանապարհը երկուսի բաժանւեց: Այդտեղ գործը բաժանեցին երկու մասի, Սատխբէկն առաւ իր ձիաւորներն, ուրիշ ճանապարհով զնայ, իսկ Քեարիմ փաշան զնայ այն ճանապարհովը, որով զնացել էին մեր փախտականները: Մենք փախչողներից տեղեկու թիւն տանք: Սրանք զնացին հասան այնտեղաց սարը, սրտեղ մի հիանալի հոտով-ջրով լցւած և ծաղկունքներով զարգարուած մի գեղեցիկ տեղ էր, ամայի և անմարդաշնակ: Այստեղ Վարազդատն իջաւ ձիուց՝ իջէք, ասաց, թող ձիանքն արածեն և մենք էլ քիչ հանգստանանք ու ապա զնանք: Նրա նպատակը կուլ անելն էր. նա գիտէր, որ

երթային, էլ չէին կարող հասնել նրանց յետևի
 եկողներն, այդ պատճառով իջաւ, որպէսզի դան
 հասնեն: Բայց Օսանը լալով աղաչեց, որ չիջնեն
 և անվնաս ազատեն, որովհետև դուք երկու
 հոգի էք, բայց նրանք անթիւ զօրքերով կդան
 և ձեզ կվնասեն. մանաւանդ երկու կողմից էլ
 Օսանին վնաս էր, կամ եղբայրները պիտի վնաս
 ւէին, կամ Աղւանը. նա Վարազդատի քաջու
 թիւնից տեղեակ չէր: Վարազդատը բարկանալով
 ասաց Օսանին. շան աղջիկ, քո ինչ հարկաւորդ
 է, ես ինչ կասեմ դու ինձ լսէ, դու և քո նշա
 նածդ գնացէք իրար հետ ուրախութիւն արէք,
 ես գիտեմ, որ գալողների հարիւրից մէկն հազիւ
 պիտի ողջ յետ դառնայ:

Այգտեղ իջան, ձիանքը թողեցին արածելու
 և իրենք հաց կերան և քաղցրահամ խմիչքները
 խմեցին: Վարազդատն ասաց Աղւանին՝ ես գի
 տեմ, որ դուք նոր էք տեսել միմեանց և շատ
 խօսելիք ունէք իրարի հետ. խօսեցէք, ես կքնեմ,
 եթէ եկող կը լինի, ինձ շուտով զարթեցրէք, և
 այգտեղ վերաբեռն քաշեց գլխին ու տնուշ
 քնեց: Աղւանն ու Օսանը սկսեցին իրար հետ
 քաղցր ու անուշ խօսել: Աղւանը զլուխը դրել
 էր իր սիրելի Օսանի ծնկան վրայ և խօսում էր
 այդ ժամանակ քոն, տարաւ և քնաւ: Օսանը

միայնակ արթուն մնաց: Մէկ էլ յանկարծ տե
 սաւ, որ դար ու գաշտ բռնած ձիաւորները գա
 լիս են. խելքը գլխից թռաւ. սկսեց լալ և անի
 ծել Վարազդատին: Կաց եղած ժամանակ աչքե
 րից արտասուքը կաթեց Աղւանի երեսին և նա
 այն ժամանակ զարթնեց, վեր ելաւ, տեսաւ որ
 Օսանը լալիս է, ասաց՝ ինչո՞ւ էս լաց լինում:
 Օսանն ասաց՝ նայիր և տես թէ ովքեր են գա
 լիս, Աստուած պատժի քո ընկերոջդ, որ պատճառ
 չլինէր մեր արեանը, հիմա մենք մէկ քաղաք
 կամ մէկ գիւղ հասել էինք և սրանք էլ չէին
 կարող մեզ հասնել. իսկ այժմ սրի բաժին լինե
 լու ենք անպատճառ: Աղւանը նայեց, տեսաւ,
 որ խուռն բազմութիւն են գալիս, սաստիկ վի
 քաւորւած, զինաւորւած և ձիաւորւած: Օսանին
 յոյս տեց և ասաց՝ բոլորովին մի վախենար,
 հիմա բոլորովին հողին հաւասար կանենք: Այս ա
 տելուց յետոյ ասաւ սազը և վագեց չգէպի Վա
 րազդատը և սկսեց երգելով զարթեցնել նրան:

Աղւանը



Վեր կաց, ով քաջ սուժիւ եղբայր,
 Զօրքով գումարւած գալիս են,
 Իր կապած դէնք ու սապար,
 Յիստ զինաւորւած գալիս են:

Վարագդասն կլաւ և տեսաւ, որ բաւականին
որս է եկել, սա էլ իր նիզակը սաղի տեղ ձեռքն
ստաւ և երգեց:

Վարագդաս

Յիրաս բացաւ վարդի նման,
Գայլի գէմը գառ է գալիս,
Բամու ճարակ յարդի նման,
Կրակի գէմ ծառ է գալիս:

Աղան

Երկիւղ չունիմ ես այդ մասին,
Միշտ ուրախ եմ կուրի գասին,
Մեծ ու փոքրներ միասին,
Իսկ թեաւորւած գալիս են:

Վարագդաս

Հոգէաւ Գաբրելի նման,
Հիմա շուտ կանեմ ցիր ու ցան,
Բաջ առիւծի գէմ խսկական
Մուկն ու կատուն խառն է գալիս:

Աղան

Յուրակ ձիուս սանձը թողնեմ,
Դար ու դաշտ արիւնսով շաղեմ,
Կանաչ արտի պէս կը քաղեմ,
Ինչ իսելագարւած գալիս են:

Վարագդաս

Սպարէզ բաց լալազար,
Կանչեմ Ասուած, շանեմ նազար,
Մէկէն շարդեմ հարիւր հազար,
Թշամու բառքառ է գալիս:

Աղան

Յղանն եմ, մտքով անդազար,
Հազարաւոր են շարք է շար.
Սմբողջը երկուսիս համար
Կաւ ձիաւորւած են գալիս:

Վարագդաս

Վարագդաս քեզ հաճապարէ,
Բոլոր մէկէն անցրու սրէ,
Դար ու դաշտ արիւնսով ջրէ,
Ազրիւրներդ սառ է գալիս:

Այս երգը վերջացրին, ձիանքը հեծան և
ընկան գալոյ բանակի մէջ: Այնպէս շարդեցին,
որ արիւնն ելաւ ու հեղեղի նման վազեց: Վերջ
ի վերջոյ գարկեցին և սպանեցին Քեարիմ փա-
շին և նրա աղային, որ նոր իբրև թէ Օսանի
նշանածն էր: Սրանք որ սպանուեցան, միւս միա-
ջամներն էլ թողին յետ փախան:

Այս սաստիկ կոտորածից յետոյ մեր ճանա-
պարհորդները նորից շարունակեցին իրենց ճանա-
պարհը գէպի Ատրպատական: Օրական մէկ իջե-

ան գնալով, մի օր հասան մի անագին ձորի մէջ, որտեղ արևը մայր մտաւ և գիշերային խաւարը պատեց: Մրանք բացօթեայ մնացին այդտեղ, որ առաւօտու լոյսը բացւի, նոր շարունակեն իրանց ճանապարհը: Այդ գործը աւագակաց բնակարան էր, քառասուն հոգուց կազմած մի խումբ աւագակներ պտնուած են այդտեղ և բոլոր գալող գնացողներին թալանում, կողոպտում և ապրանքը հաւաքում են: Ազանն ու Օսանը տեղեակ չէին այդ բանից, բայց Վարազգատը հաստատ գիտէր. երբ որ գիշերը վրայ աւեց, արգէն Վարազգատը ասաց Ազանին, դուք գնացէք միասին հանգիստ և ապահով ննջեցէք մինչև լոյսը բացւի, ես այս գիշեր պէտք է ձեզ պահապան լինեմ: Ազանն ու Օսանը քնեցին: Բայ Վարազգատին, որ յայտնի էր այդ շարախումբ աւագակաց ժողովը, նա գիտէր որ գիշերը անպատճառ իւր վրայ գալու են, իւր պատրաստութիւնը տեսաւ. ձին հեծաւ և սկսեց երթեկութիւն անել ճանապարհները, ինչպէս մի պատերազմական զինուոր: Երբ գիշերային խաւարը պատեց աւագակապետը հրամայեց տասն հոգու, որ գնան դրանց սպանեն և եղած տարանքը կողոպտեն տանեն, բայց այս տասը հո-

գին, որ գնացին հեռւից Վարազգատին սեսան, էլ երկիւղից չներկայացան նրան և զարմանալով յետ դարձան, գնացին և պատմեցին իրենց աւագակապետին ասելով թէ, մի հիանալի հակայ է, այնպէս է հեծել ձին, որ կարծես թէ քամակից կզած լինի. այնպէս է զինաւորւած, որ վրայից կայծակ է թափուած, զլուխը երկփութ կլինի, քիթը կէս փութ, առամները վաքազ խոզի առամներից երկայն, շրթունքները ցուլ գոմէշի կոտոշներից հաստ ու տափակ, թեւերը անտառի ճիւղ, մատները ինչպէս զրանակ, մեր գիտութեամբ ազամորզի չէ, այլ մի հրէշ, կամ հոգէտ Գարրիէն է: Աւագակապետը ասաց՝ ձեր պատմութեան համաձայն այդ մարդը Սպահան քաղաքի քաջ Վարազգատը կլինի և եթէ նա լինի մեզ քառասունիս էլ կուլ կտայ: Յետոյ ասաց, իմ սպսու էք և քառասունդ էլ ձիանքը հեծէք գնանք, ես առաջ կպատերազմեմ նրա հետ երգով և երգիս միջոցով կարող եմ ճանաչել, եթէ իմ ասած մարդն եղաւ էլ միջ կայնի, բոլորդ էլ փախէք, իսկ եթէ ուրիշ եղաւ, արգէն կպատերազմենք նորանց հետ սուսերով և կը կողոպտենք Աստուծով: Աւագակապետը այս լոյսը տալով իւր մարդկանցը, ելան և գնացին

դէպի Վարազգատը, երբ որ մօտեցան աւազա-
կապեօն իւր սազը ձեռքն առաւ, որպէս թէ
երկիւզ տայ քաջ Վարազգատին:

Աւազակապետ

✓ Այլ անպիտան ասա, տեսնեմ ինչ մարդ ես,
Հպարտ, հպարտ ման ես գալում սահմանս.
Երևում է շար թշնամի, թակարթ ես,
Մըրինդ խմելն է ուխտ ու պայմանս:

Վարազգատ

Հիմա նշանց կտամ քեզի սահմանդ,
Սպասէ մի փոքր յետև կիմանաս.
Փորումդ կը թողնեմ ուխտ ու պայմանդ,
Սպասէ մի փոքր յետև կիմանաս:

Աւազակապետ

Ես այս սար ու ձորի վերայ իշխան եմ.
Քեզ նման շատերին սարուկ կանեմ,
Չարաչար տանջանքով քեզի կը սպանեմ,
Գլուխդ կը տանեմ իմ օթեանս:

Վարազգատ

Նորից հաւ ես եղել նորից հաւկիթ կածես,
Երկու երեք պրամ շմփիէն ցած ես.
Գալով գնացողի արիւն կը ծծես.
Սպասի մի փոքր յետև կիմանաս:

Աւազակապետ

Սյուպէս անկարգ, անկարգ մի խօսի իդուր:

Կարում եմ սուրերով այդ լեզուդ անդուր.
Մըրի մի թևիս տակը մեղայ տուր.
Ահա այս է վերջն իմ հրամանս:

Վարազգատ

Փայլուն սուրս քեզի առակ կը շինի.
Գիակդ պիտի դայլերին բաժին լինի.
Մըրինդ կը խմեմ ինչպէս գինի,
Սպասէ մի փոքր յետև կիմանաս:

Նոր աւազակը հատկացաւ: որ այդ մարդը
Սպանան քաղաքի քաջ Վարազգատն է, սկսեց
ծնկները զողալ և երգեց միւս տունը:

Եթէ Վարազգատն ես ով առիւծ սպայ,
Սարսափելով ձեռք ու ոտքս կը գողայ.
Աւազակապետն եմ քեզ կասեմ մեղայ,
Սգատ արա կեանքս իմ հոգեհանս:

Վարազգատ

Վարազգատն եմ գործով ուրախ գարթ.
Հաստատ պահանջում եմ դէմս կայնող մարդ,
Կաշիդ տիկ կը հանեմ կը լցնեմ յարդ,
Սպասէ մի փոքր յետև կիմանաս:

Երգից յետոյ աւազակները կամեցան փախ-
չել, բայց Վարազգատը հողէ առ Գարբիէլինման
սուրը քաշեց և ընկաւ նոցա մէջ և քառասունի
զլուխներն էլ կարեց և նրանց ձիանքը բռնեց
կապեց, որ չփախչեն և այդտեղ արածեն, իսկ

ինքը յետ դառաւ եկաւ Աղւանի և Օսանի մօտ
և տեսաւ, որ խորն քնի մէջ են, Վարազդատը
իւր սաղը ձեռն առաւ, որ զարթեցնէ իւր ըն-
կերներին:

Զարթիր բաւական է քնես,

Զարթիր իմ պատուականս զարթիր,

Քառասուն կաքաւ եմ զարկէ ես,

Վեր կաց տես պատուական եղբայր:

Եկան քոյս բնրնացին,

Կյուսները աւին գնացին,

Կիակները փուլած մնացին,

Վեր կաց տես պատուական եղբայր:

Քառասուն հոգով միասին

Եկան որ մեզի վնասեն,

Եօթը տարւայ մեռելին հօտին

Վեր կաց տես պատուական եղբայր:

Վարազդատն եմ լոյսը բացաւ

Սար ու ձոր արիւնով լցաւ,

Սուրս առանց ջուր թացաւ,

Վեր կաց տես պատուական եղբայր:

Այս երգից յետոյ Աղւանն ու Օսանը վեր
եկան և այդ զիակները գետին փուլած տեսան
շատ ու շատ զարմացան: Յետոյ գնացին աւա-
զակաց բնակարանը և տեսան, որ լիքն էր սփի,
արծաթ, կանանցի զարդ ու զարդարանք և բազ-

ճաթիւ թանկագին իրեղէններ, որոնց քաշը թե-
թե և զինը թանգ, բոլորը բարձան ձիանների
վրայ. բոլորն եղաւ քառասուն ձիարեա: Վարազ-
դատը սասց՝ այս էլ մեր Օսանի օժիտը, այսին-
քըն (Չեհեզը): Ամօթ չէր մեզի համար, որ ա-
ռանց օժիտ հարս տանենք և զարձեալ Վարազ-
դատը սասց՝ ես որ սկիզբը Օսանի մկրտութեան
քաւոր եղայ և այժմ պիտի ես քաւոր լինիմ՝ ձեզ
պատկին, արդէն Օսանը իմ սանամէքս է, և նոյն
կէտին Օսանը եկաւ և Վարազդատի սոր համ-
բուրեց, իբր իւր բնտիր քաւոր և նա էլ համ-
բուրեց իւր սանամօր ճակատը և շարունակեցին
իւրեանց ճանապարհը, ինչպէս մի մեծ կարա-
ւան: Օրերից մի օր հասան իրանց նպասակի
տեղը, այսինքն Սպանան քաղաքը: Մուրազխանի
կինը Աղւանի հօրաքոյր Նազրիկ տիկինը զէմ ե-
լաւ մեծ ուրախութեամբ, բարևեց գալոյ հիւրե-
րին և Օսանի երեսները համբուրելով տուն տա-
րաւ: Աղւանն էլ այդ բերած ազրանքի կէս մա-
սը ընծայեց Վարազդատին և իւր բաժինն էլ մի
սենեակում տեղաւորեց: Սրանից յետոյ Վարազ-
դատը սասց Նազրիկ տիկնոջը, թէ անա ես իմ
խոստումս կատարեցի, մնացիւր դու որ քո խոս-
տումդ կատարես և պատկել տաս դորանց. Նազ-
րիկը սասց՝ Աստուած ողորմած է, պատկել կ'տանք:

և այդանկից Վարազդատը թողեց, գնաց իւր տունը քսան ձիաբեռ սպրանքով:

Այդ ժամանակ Մուրազխանը տանը շէր-Նադրշահի գիւանն էր գնացել և երբ որ Մուրազխանն տուն եկաւ, կինը յայտնեց մարգին այդ գործի հանգամանքը: Իսկ երբ իմացաւ թէ աղջիկը մանմեղական է, շատ սաստիկ բարկացաւ, բայց երբ աղջկայ գեղեցիկութիւնը տեսաւ, աւելի կատաղեցաւ, կանչեց Աղւանին և ասաց, այս սաստիկ ժամանակիս և այս թագաւորանիստ մայրաքաղաքիս դու ինչպէս համարձակւար այդ անիրաւութիւնը արեցիր, շուտով հեռացիր քանի որ չէ լսել Նազրշահը, երբ որ լսեց իմ տունն էլ քեզ հետ կը վառէ: Սաստիկ բարկութեամբ կանչեց զահիճները և հրամայեց նոցա թէ տարէք քաղաքից դուրս հանէք, սպանէք կամ արտրէք վայրենի ձորերում, որ երթայ գայլ ու գազանի կերակուր գառնայ: Երբ զահիճներն եկան տանելու, Աղւանը վշտալի սրտով սաղը ձեռքն առաւ և երգեց այս տիրական երգը:

Փափագիս հասնելու դիմեցի տանդ,
Մի թողնիր սիրելուս կարօտով ինձի,
Ահմեկ թռչունի պէս ընկայ ուռկանդ,
Մի թողնիր սիրելուս կարօտով ինձի:

Գերագնիւ իշխան ևս աշխարհին փայլոց,
Իզուր անէ՞ծքատեղ մի լինի այլոց,
Քղճալու կերակուր մի անի գայլոց,
Մի թողնի սիրելուս կարօտով ինձի:

Իբրև Ատուծոյ հիւր եմ եկել դուռդ,
Քղճալի Աղւանն եմ, ընկել եմ բուռդ,
Միրաս կտրատում է տւած մըմուռդ,
Մի թողնիր սիրելուս կարօտով ինձի:

Այս երգից յետոյ Նազրիկ տիկինը լալով իրան գցեց մարդու ոտին և ասաց. անխիղճ անասուած, իմ եղբօրս ժառանգութիւնը կուգես մէկէն աշխարհից ջնջել, թռչունն որ թռչուն է, իրան գցում է փշի հովը և փուշը նրան պահպանում է իր հովանաւորութեան տակ, դու փշի չափ էլ չկաս, որ մի հիւր քո տանդ մէջը պաշտպանես: Այս խօսքերն ասաց և լաց եկաւ, նոյնպէս ևս լալով խնդրեցին զահիճները, որ ազատէ այդ խեղճ տղային: Բայց Մուրազխանը կնոջը շատ կսիրէր, ուստի կնոջ խնդրին գիշտանելով, ասաց՝ այ կնիկ, ախր ևս ի՞նչ անեմ, այդպէս բան չի լինի, թէ որ այդ աղջիկը տայ իմ որդի Բայրամ խանին և ինքն այս քաղաքի հայ աղջիկներէց մէկն ընտրէ, ևս իմ սեփական ծախսովս հարսանիք կանեմ: Դառնալով զէպի տղէն, ասաց՝ եթէ համաձայն ևս խօսքիս, այս ըոպէիս

հարսանիքդ կանեմ, ինչ կասես, պատասխան
առուր: Տղէն ասաց՝ խօսքով չեմ կարող, պէտք է
երգով պատասխանեմ. սազն առաւ և երգեց
այսպէս:

Ահա ասեմ քեզ իրաւը,
Կեանք կուտամ, սիրունիս չեմ տայ,
Ընկղմած եմ սիրոյ նաւը,
Կեանք կուտամ, սիրունիս չեմ տայ:

Թող հասկանայ մեծ իշխանը,
Արդարանայ դատաստանը,
Այս է վերջին պատասխանը,
Կեանք կուտամ, սիրունիս չեմ տայ:
Խեղճ Աղւանիս վառ կրակը,
Պաւարել է արեգակը,
Հողուս հատոր իմ տատրակը,
Կեանք կուտամ, սիրունիս չեմ տայ:

Մուրազխանը կրկին բարկանալով ասաց՝
արդէն այսպէս է հայոց բանը, երես որ աւիր,
աստառ էլ կուզեն. ուրեմն օղէն տարէք, աղջի-
կը բերէք, տեսնեմ թէ նա կամաւ է եկել, թէ
ուժով են բերել: Այսքան բանին դեռ աղջիկը
տեղեակի չէր, մի առանձին սենեակում նստած,
խօսում էր մօտը եղած աղջկերանց հետ: Տղէն
տարան, աղջիկը բերին առեան: Մուրազխանը
հարցրեց աղջկան թէ՛ դու քո կամաւդ ես եկել

թէ ուժով են բերել քեզ: Աղջիկն ասաց՝ ես իմ
կամքով եմ եկել և կը մահանամ ու իմ պայմա-
նից էլ յետ չեմ գառնայ: Պանը կրկին ասաց
աղջկան՝ քեզ մի խրատ աւող չեղաւ թէ այդ
հայոց կրօնքը կրօնք չէ: Աղջիկն ասաց՝ ինձ
խրատ աւել է Յիսուս Փրկիչ և Աստուածածին
ս. կոյսը— ես աշխարհի սկզբից մինչև աշխարհի
Փրկիչը դիտեմ թէ որպէս է եղել, ես խրատի
կարօտ չեմ երբէք: Պանը դնաց առնելով աղ-
ջկայ խօսքերն ասաց՝ ուրեմն պատմիր իմանանք
թէ ինչպէս է եղել աշխարհի սկիզբը մինչև քո
Փրկիչը: Աղջիկն ասաց՝ սագով պէտք է ասել և
սազն առնելով սկսեց երգել արարչագործութեան
վերաբարեալ հեռեհալ երգը:

Աստուածութեան մարդ ի հոգոյ ստեղծեց
իւր պաակներին,
Իօթն արփիչներով լցրեց զարդարեց նորին,
Նա չը պանեց պատիրանը, կեբաւ պաուդ,
մերկացաւ,
Ջրկաւ եղեմայ դրախտէն, ձեռագիր աւեց չարին:
Ձեռագիր տալով չարին, իբրև թէ ուրախացաւ:
Երբ իմացաւ իւր գերութիւնը, լալ ողբալով
սիրեցաւ,

Կարձեալ կրկին Ասուածութիւնը մարդասէր
 քաղցրացաւ,
 Տալով նրան գիր կտակին, թէ կազատեմ
 վեց դարինս
 Երբ լրացաւ տիրոջ պայմանը եկաւ Փրկիչ
 աշխարհին,
 Չարչարանքով ազատ արեց անմեղ վա-
 ճառած դերին,
 Վերին Երուսաղէմ զբախտ խոտացաւ
 արդարներին,
 Անարժան մեղաւոր Օսան, նա էլ խնդրեց
 Տէրին:

Մուրազխանն ասաց. ուրեմն դու այստեղ
 մեզի քարոզիչ ես եկել. ես միտք ունէի քեզ
 քեզնեւ իմ որդուս վրայ, բայց նկատելով, որ
 դու մի բան էլ աւելի վատագոյն ես հայերիցը,
 էլ ինձ հարկաւոր չես. հազար ափոստ այն գե-
 ղեցկութեան, որ քեզ աւել է Ասուած և մահ-
 օճիղի օ. կրանքն էլ ուրացար, քեզ հետ խօսերն
 մեզք է: Ի՞նչ սրի բաժին ես, բայց իմ օճախս
 էք ընկել, ես կիմնայեմ իմ սիրելի կնոջս պատւի
 համար: Բայց նատրչահր ձեզ կախազանից կկա-
 խէ անպատճառ, ձեր արիւնը ձեր գլուխը և իբ
 կնոջն էլ ասաց՝ անա ես խնայեցի, դէ գնայ,

աշխատիր, որ նատրչահրց հրաման հանես և դո-
 րանց պսակել տաս: Կինն ասաց՝ Ասուած ողոր-
 մած է, պսակել կտամ և մեծ հանդիսով էլ
 հարսանիք կանեմ: Յետոյ տաքաւ աղջկան և
 տղային մի առանձին սենեակի մէջ և ասաց՝ միք
 երկիւղ անի, Ասուած ողորմած է, որպէս որ
 լինի ձեր նպատակին կհասցնեմ: Նրանք այնտեղ
 մնացին մինչև առաւօտ. լոյսը որ բացւեց նրանց
 վրայ, լոյսն ու բարին բացւի լոռոյները ու իմա-
 ցողները վրայ, տղայի հորաքոյրն ասաց՝ դուք
 սպասեցէք, մինչև որ ես գնամ շահի կնոջ մօտ
 և խնդրեմ, գուցէ միջնորդէ շահին և հրաման
 ստանամ, որ ձեզ պսակել տամ: Մրանք մնացին,
 նազրիկ խանուժը գնաց շահի գեղեցկագոյն աչ-
 գին, որտեղ ամեն օր շահի կանայք զբօսնելու
 էին գալիս: շահը քառասուն կին ունէր, որոն-
 ցից տասներկուսը հայի աղջիկ էին, իսկ միւս-
 ները իսլամական ցեղից:

Բայց բոլորի գլխաւոր թագուհին շահի հօ-
 րեղբոր աղջիկն էր: Նազրիկ խանուժը գնաց և
 թաղուհու ձեռքը համբուրեց և խնդրեց, թէ իմ
 եղբոր տղէն մի մահմեդական աղջիկ է բերել,
 միջնորդէ, շահից հրամանս դուրս բեր, որ կարո-
 զանանք պսակել: Թագուհին ծիծաղելով ասաց.
 ուրեմն լաւ աղջիկ է, որ հայի տղի հետ է փո-

խել: Նազրիկ արկինը հասկացաւ, որ թագուհին տնայ է անում, ասաց՝ այս աշխարհի միջում չի ճարում ոչ մի տեղ նրա նման գեղեցիկ: Թագուհին ասաց՝ ուրեմն երբ տեսնեմ, թէ գովելուդ չափ սիրուն է, նպատակիդ կհասնիս. եթէ ոչ գլուխը կը գարնեմ: Նազրիկ խանումը իւր ազատիններից երկուսն ուղարկեց եկան և Օսանին ասացին: խանումը պարտիզում քեզ կանչում է: Օսանն ելաւ և գնաց. երբ որ պարտիզի գուռը բաց արեց ներս մտաւ, տեսան որ ինչպէս արեգակը կամ տասնհինգամ լուսնեակ երկնքից երկիր լիջած գայիս էր սիգանեմ հագաւի նման, կարծես թէ նոր թագուհի: կարմիր վարդ էր իսկական, հասակ ունէր նոճի ծառից պատական և ծոցումը նուան ծագկոց բուրաստան, սպիտակ վիզը կոնկուց երկան, շրթունքները շատ գեղեցիկ յարմար էր, յեզուն քաղցր անուշ մեղր ու շաքար էր, բերանն իսկ փառաւոր տաճար, ատամները մարգարիտ գուա գոնար անգին էակ էր. կարմիր ու սպիտակ թշերը նոսնուսն հաւասար էր, սնագոյն աչերը բոցավառ կանթեղի պէս գամբար էր, նշխուն ծիածան ունքերը նոր լուսնակի պէս կամար էր, սկուտեղ ճակատը լուսաւոր լուպտերի նման էր, տակթէլ մազերը քառասուն գիտակ էր մինչև գարշապարը հծծեղ

էր ծայծայ ապրեշումէ յուսակ: Այս աշխարհում չկար այդ տեսակ սիրուն և ինքը դեռ նոր էր մտել տասնհինգ տարւայ հասակը: Երբ այս աղջկան տեսան խնամիները, բոլորն էլ դարմացան և ապուշ մնացին: Իսկ աղջիկը եկաւ քաղաքավարի կերպով և խոնարհաբար գլուխ տալուց յետոյ ոտքի վրայ կանգնեց: Թագուհին հրամայեց և աղջիկը նստաւ. յետոյ հարցրեց թէ՛ դու որ այս չափազանց գեղեցկութեան թագուհին ես, էլ ինչո՞ւ թողեցիր մահմեդական կրօնը, իսլամական քաջ երիտասարդները և ընդունեցիր այդ չնչին հայ երիտասարդին և նրանց վատ կրօնը. աղջիկը չղիմանալով այդ խօսքերին, ասաց՝ ես ամենալաւ և ընտիր կրօն եմ ընդունել. անատաւ որ իմանաս. սազն ատաւ և երգեց այսպէս:

Ասեմ յատուկ շատ ընտիր է,
 Հաւատը և յոյսը հային,
 Եկեղեցուն հիմնադիր է,
 Իսկ և իսկ Յիսուսը հային:
 Սուրբ էջմիածնու հիմը դրեց,
 Չարաց գունդը անդունդ խրեց,
 Ազգը հայոց լուսաւորեց,
 Փառաւոր է յոյսը հային:
 Լուսաւորիչ բարմեր վանեց,
 Սուրբ Մեգրոպը տառեր հանեց:

Արդարութեան սերմը ցանեց,
 Օրհնւած է բոյսը հային:
 Սուրհուրդը մեծ ծածկւած է,
 Չգիտցողի քովը ցած է,
 Յիսուսը յատուկ Աստուած է,
 Նա է խրախոյս հային:

Օսանը ճշմարիտ կասէ,
 Ով որ ահանջ ունի, լսէ,
 Միշտ առ Աստուած բարեխօս է,
 Աստուածածին կոյսը հային:

Այս երգը դուր չեկաւ թագուհուն, բարկացաւ: Բայց Նազրիկ խանոււմը և շահի միւս կանայք ազաչելով նրա բարկութիւնը իջուցին. և ճահի այն հայ աղջիկ կանայքը թագուհուն ասացին՝ հայոց աղջիկները մեծ մասը պարսիկներն են առել, թող այս մի աղջիկն էլ հայ ազայ առնի. թագուհին ասաց՝ դուք չը գիտէք, Աստուած մեզ այնքան կամեցաւ, որ շահը թւի և տառի տակ է մտել և սօճի է դառել. եթէ ոչ սրան տեսնելու պէս կառնէր և ամենիցս գլխաւոր թագուհիները թագուհին կանէր: Ինչ որ կը խնդրուիք, ես էլ կը խնդրուիմ, տեսնենք ինչպէս կը լինի: Յետոյ աղջկան ասաց՝ քեզ որ կը կանչեն շահի դիւանը, թէ որ շահը կասէ արի իմ որդուս առ, դու ասա թէ իմ հոգեկան եղբայրն է և ես կհաս-

տատեմ այդ բանը և Նազրիկ խանոււմին էլ ասաց՝ գնայ, երբ որ դիւանը ցուի, արի գնանք միասին խնդրելու: Բայց Օսանի Աղւանից հեռանալն ութ ժամ տեց: Աղւանն էլ վառւելով մնաց և ասաց սաստիկ լալով՝ աւաղ տարան սիրիրուհիս, էլ չեն բերի. ինձ խաբեցին և տարան աւին պարսիկներին. կսկծալով և եռանդի գալով սագն առաւ և ասաց այս երգը.

Միրելիս ինձնից ջոկեցին,
 Սաստիկ լալով առան գնացին,
 Միսը եղրնկէն պոկեցին,
 Մղկտալով առան գնացին:

Սպասում եմ մի լուր չկայ,
 Չեոքս սուսեր ու սուր չկայ,
 Հոցում այսպէս հուր չկայ,
 Ինձ խաբելով առան գնացին:

Անբախտ Աղւանիս ատեցին,
 Ցաւի վէրքի մէջ պատեցին,
 Միրելիս ինձնից գատեցին,
 Մոմուռ տալով առան գնացին:

Աղւանն այս երգն ասաց, շատ լացեց ու քնաւ, բայց արտասուքի կաթիլները կուտակւած էին երեսի վրայ: Նազրիկ խանոււմը և Օսանը շնորհակալ եղան թագուհուց և միւս խանոււմներից և ելան եկան: Օսանը երբ որ տեսաւ

Աղւանին քնած և արտասունքն երեսին թափած,
մուխը մարաւ և սազը ձեռքն սոնելով, ասաց
այս երգը:

Աչքերս կուրանար, ով իմ կենակից,
Չտեսնէր այդ կոծն ու կականը, սիրելիս,
Կուցէ խոտվել է ինձանից,
Հոգուս հատոր իմ պատուական սիրելիս:

Անխիզ՞ մարդի գլխին թափւէր կրակը,

Այրելով վառէր ինչպէս կրակը,

Տխուր արառւմ տեսայ ես իմ տատրակը

Վառւեցաւ թիթեռի նման սիրելիս:

Սիրահար սոխակը յուսահատօրէն,
Շատ է լացէ ուրախութեան փոխարէն
Թափել է արտասուք երեսի վրէն,
Օսանիս թանկագին Աղւան սիրելիս:

Երգը վերջանալուց յետոյ Աղւանը զարթ-
նեց և ելաւ Օսանին իր քովը տեսաւ շատ
ուրախացաւ. գործի հանգամանքը հարցրեց նը-
րանից, իսկ Օսանը ասաց քիչ՞մ գէպի յաջողու-
թիւն կերեայ, նա էլ Աստուծո՞ւ պորմած է: Սրանք
այստնդ մնացին, բայց Նազրիկ խանութը ելաւ
և գնաց շահի դիւանը, այն ժամանակ գնաց որ
գիւանը ելեր էր, ինքը և թագուհին միասին գը-
նացին շահի մօտ և ինդրւեցին թէ այս տեսակ
մի գործ է պատահել, ինդրում ենք, որ իրաւունք

տաս պահելու: Շահը սաստիկ բարկացաւ
և ասաց՝ չի կարելի այդպէս բան լինել և Ֆա-
ռաշներին ասաց՝ զնացէք աղջիկն էլ տղան էլ
քոնէք բերէք: Ֆառաշները բերեցին աղջիկն ու
տղէն շահի դիւանը: Բայց երբ որ տեսաւ շահը
այս աղջկայ գեղեցկութենը, զարմացաւ և իւր
մտքումը ասաց՝ պատճառն ինչ է, որ այս գե-
ղեցկութեան աէր աղջիկը ցանկանում է առնել
հայ տղայի, որին խաներ ու բեկեր ցանկանում
են հարս անել: Տեսաւ որ տղան աղջկանից պա-
կաս չէր գեղեցկութեան կողմից, զարձաւ դէպի
Նազրիկ խանութին և թագուհուն ասաց՝ սրանք
ձերկուան էլ կախազանից կախելու արժանի պա-
տիժ ունեն, բայց ի պատիւ ձեր ինդրանաց
կիւնայեմ, թող աղջիկը մի մահմէզական տղայ
ընտրէ իւր համար և տղէն էլ մի հայ աղջիկ:
Դարձեալ շահը աղջկան ասաց՝ բերել տամ
տղերք այստեղ, որին որ կը հաւանիս ընտրէ:
Աղջիկը սազը ձեռքն առաւ և ասաց այս աղերսալի
երգը:

Ո. գ ջ ի կ ը

Այս է աղերսանքս գերազնիւ շահից
կամ մահացուր կամ ինձ իմ սիրելուստուր.
Երկիւղ չունիմ ես իմ կեանքից ու մահից
կամ մահացուր կամ ինձ իմ սիրելուս տուր:

Շահը դառնալով դէպի տղէն ասաց՝ դու
ինչ կասես, դու էլ իմ ասածիս յօժար չե՞ս ու-
զում հայի աղջիկ: Տղէն վերցրեց սազը՝

Տ ղ է ն

Մատաղ լինեմ արեգնափայլ շահիդ
կամ մահացու կամ իմ սիրելիս ինձի տուր-
չող ու մոխիր դառնամ լուսեղէն գահիդ
կամ մահացու կամ իմ սիրելիս ինձի տուր:
Շահը ասաց՝ այս ինչ յիմար մարդիկ են,
որ մինչև անգամ մահանալու յօժար են և իրա-
քից բաժանելու յօժար չեն: Այս խօսքերի վե-
րայ ասաց յետևեալ տունը:

Ա ղ ջ ի կ ը

Սիրահարութիւնը շատ դժւար բան է
Առանց սուսերու սուր,
Պիրտս ալեկոծեալ ծովի նման է
կամ մահացուր կամ ինձ իմ սիրելուս տուր:

Շահին շատ դուր եկաւ աղջիկը և ասաց՝
արի առ իմ որդուս Շահգատիս, որը ինձանից
յետոյ պիտի բարձրանայ այս գահը և դու էլ
կը լինես գերագնիւ թագուհի: Մարդ ուղարկեց
թէ գնացէք և Շահգատիս բերէք, նրանք որ
գնացին Շահգատին բերելու, հուրն ըրկաւ Ազ-
ւանի ջանը և ասաց հետևեալ տունը:

Դաւիթ մարգարէի պէս մի կարէ ծառս,
Չեւքիցս մի խլէ մի հատիկ դառս.
Այս է ազերուանքս այս է բառբառս
կամ մահացուր կամ սիրուհիս ինձ տուր:

Այսքան ժամանակում Շահգատէն եկաւ դի-
ւան և շահը ցոյց տալով աղջկան ասաց՝ անա
այս է իմ որդին. կհաւաննիս, եթէ կամք կտաս
առաւօտուն հարսանիք կանեմ, եթէ ոչ առաւօ-
տուն կտիադանից կկախես: Հիմա դու գիտես
որը կամիս այն ընտրէ: Աղջիկը ասաց՝ չէ որ
թագուհին ինձ ասաց թէ այդ դէպքում դու
ասա թէ որդիդ իմ հոգեկան եղբայրն է, և
սազը զարկեց:

Որդիդ իմ եղբայրն է հոգեկան հայրիկ,
Ինձի համար ծնող է թագուհի մայրիկ.
Խղձալի Օսանն եմ իսկ երեխայիկ

կամ մահացուր կամ ինձ իմ սիրելուս տուր:
Շահի բարկութիւնը բռնեց, դարձաւ դէպի
տղէն և ասաց՝ դու էլ վերջ տուր տեսնեմ յե-
տոյ ես գիտեմ իմ վճիռը, այնպէս անեմ, որ
երկնքի թռչունները ձեր միսը ուտեն և ոսկոր-
ներդ գայլազեար տանի: Տղէն սկսեց միւս
տունը:

Բագմացաւ Աղւանիս ցաւերը նորէն

Պանդատուում է իրան ծնւած օրէն,
 Թէ կսիրես ընտիր Մանճաղ մարգարէն
 կամ մահացուր կամ սիրունիս ինձի սուր:

Շանը բարկանալով երկուսին էլ դրեց բան-
 սը, որ առաւօտուն կախաղանից կախէ: Այդ
 ժամանակ թագունին և Նազրիկը ընկան շահի
 ձեռքն ու ոտքը և յալով ազաշեցին, որ ինայէ,
 իսկ շանը սաստիկ բարկութեամբ ասաց՝ նա իմ
 որդուս էլ հաւանութիւն չուեց, և ինձի ամօ-
 թով արեց իմ նախարարներին դէմ, այդպիսի-
 ների համար էլ ինչու իզուր խնդրածք կանէք:
 Թագունին ասաց՝ ոչ թէ հաւանութիւն չուեց,
 այլ իրաւ ասաց. թէ և քեզ յայտնի չէ բանը,
 բայց ինձի յայտնի է, որ այդ աղջիկը և Շան-
 զաղը հաստատ եղբայր ու քոյր են, որովհետև
 այս տարի, որ ես գնացի հաճը, այդ աղջկայ
 մայրն էլ եկել էր այնտեղ, Շանզազէն իմ գիրկս
 էր և այդ աղջիկն էլ իւր մօր գիրկն էր, զորս
 գեղեցկութիւնը որ տեսայ, մօրը ասացի բեր
 աղջիկն ու աղէն բեշքեարթմայ անենք, նա էլ
 յօժարացաւ և սիրով ընդունեց, որ առաւօտուն
 պիտի նստայմանը հաստատէինք և երբ որ գիշերը
 քնայ, երազիս մեր մեծ Մանճաղ մարգարէն
 եկաւ և ասաց. թէ այդ երկուսը, որ իրար առ-

նեն, չեն վախել միմեանց: Ահա ես ասում եմ,
 որ բեշքեարթմայ շանէք, իրարու եղբայր ու
 քոյր արէք և այդ պատճառաւ առաւօտուն եղ-
 բայր ու քոյր արեցինք. հաջի մէջ տեղը տղի
 մատը կտրեցինք, արիւնը կաթեցրինք աղջկայ
 բերանը, իսկ աղջկանը տղի բերանը: Այսպիսով
 եղան եղբայր ու քոյր մեր Մանճաղի հրամա-
 նով, և այդ պատճառաւ էր, որ աղջիկը ասաց թէ
 իմ հոգեկան եղբայրն է որդիք: Ճշմարիտ ասաց
 էլ ինչու կբարկանաս և բանդ կուզարկես խըղ-
 ճալիներուն, գուցէ այդ բանը Աստուաց է և նա
 մեզ վրայ կը բարկանայ և մեզ զանազան վնաս-
 ներ կհասցնէ. մտածիր որ քեզանից վէր և մեծ
 տիեզերակալ Աստուած կայ երկնքումը: Թագու-
 հու այս խօսքերը քիչ մեղմացրին շահի բարկու-
 թիւնը և նա ասաց՝ ինչո՞ւ այնպէս կանեմ որ
 Աստուած բարկանայ, բանը Աստուծով կանենք:
 Առաւօտուն մեր երգիչները բերել կամ, թող
 իրար հետ երգ ասեն, որ կողմը որ պատասխա-
 նի տակ մնաց, նորան կախաղանից կկախեմ:
 Թագունին ասաց՝ այդ աղէն որ յաղթեց իրա-
 ւունք կտան պսակելու: Շանը ասաց՝ եթէ այդ
 աղէն յաղթեց իմ երգիչներին գլուխները կզար-
 կեմ և զօրանց էլ իրաւունք կտամ պսակելու:

իսկ եթէ յաղթւեց, ուրեմն Աստուաց չէ դորանց սիրահարութիւնը, այնժամ երկուսի գլուխն էր կզարկեմ և Աստուած էլ չի բարկանայ. դէ գնացէք և սպասէք մինչև ասուլոս կամ ես կուրախանամ կամ դուք: Շահն էլ մի աշուխ ունէր անունը Զուլալ, որի ձեռքի տակից գուրս էր եկել մինչև քառասուն աշակերտ և մինչև այդ ժամանակ գորա դէմը երբէք աշուղներ չէր կայնել, ով որ եկել էր, սազը տւել և գնացել էր:

Այդ ասուլոս շահը կանչել տւեց աշուղ Զուլալին. նա տասներկու աշակերտով եկաւ, բերել տւեց և Աղւանին: Իւր նախարարները և պատուար մարդիկ բոլորն էլ հաւաքւան արքունի դուռը, նոյնպէս ևս ներկայացան այդտեղ թագուծին, Նազրիկ տիկինը և Վարազդասը իբրև կողմնակի անձնաւորութիւններ: Շահը բացատրելով ասաց երգիչներին՝ անաւտիկ լսէք իմ վճիռս պատմեմ ձեզ, այստեղ կեանքի հարց կայ, ով որ յայթւեց գլուխը պիտի զարնւի անպատճառ: Ես իրաւունք եմ տալիս, որ ասալ Զուլալը ասէ, որովհետև այս նոր գալոյդ երգիչը սիրահարւած է, թէ դրա սիրահարութիւնը Աստուաց է, Զուլալի բացատրութիւնը կտայ, եթէ ոչ կյաղթւի և կեանքիցն էլ կը զրկւի: Ահա այս խօսքիս թող վկայ լինին վերև Աստուած և ներ-

քի այս գումարեալ ժողովուրդը: Այս հարցից յետոյ աշուղ Զուլալը գնաց մի առանձին տեղ և մի պահուսա, այսինքն մի մուհամայ շինեց, գրեց և բերեց կախ արեց սենեակի պատից, սազը ասաւ և սկսեց այդ պահուստի միտքը հարցնել Աղւանից իւրեանց կանուանց համաձայն:

Զ ու լ ա լ

Այն սով էր որ աշխարհի մէջ խիստ զանազան բան արեց
 Իւր համար անմահ յիշատակ ազգութեան
 պայման արեց
 Ամբողջ տարւայ մէջ մի անգամ կարգ ու
 կանոն հաստատեց
 Գիշերային իշխանի հետ հաւասար նշան
 արեց:

Ա զ լ ա ն ը

Մահմադն էր աշխարհի մէջ իւր զուռան
 գիրքը գրեց
 Իւր համար անմահ յիշատակ ազգութեան
 կարգադրեց
 Ամբողջ տարւայ մէջ մի անգամ օրօձ
 պահեց
 Եռեսուն օր լուսինի հետ հաւասար նշան
 արեց
 Այս տունը որ բացատրեց, Զուլալի ծնկները

գորաց և սկսեց միւս տունը ասել ճարահարտեալ:

Զ ու լ ա լ

Այս աշխարհէն մարմնաւոր իսկ երկինք վերացաւ

Վերացաւ ու բարձրացաւ Աստծուն ներկայացաւ,

Այն ինչ պարզեւ էր ստացաւ, կրկին երկիրը դարձաւ

Օրական հինգ անգամ բացւող մէկ ծաղիկ սահման արեց:

Ա դ ւ ա ն ը

Միկնոյն Մահմադն էր, որ երկինք վերացաւ

Վերացաւ ու բարձրացաւ Աստծուն ներկայացաւ,

Մէկ ձրար պարզեւ ստացաւ, կրկին երկիրը դարձաւ,

Օրական հինգ անգամ աղօթքի շարունակ սահման արեց:

Զ ու լ ա լ

Մշուղ Չաւաշն ասում սրա հաւճաթ համարը հաստատ

Չորս հազար չորս հարիւր եօթանասուն երեք հաս

երեք վանկէ եօթը գիր իսկ իւր անուն համեմատ,

Կարդաց, գրեց շարադրեց ընդիր պատական արեց:

Ա դ ւ ա ն ը

Ազւան երդիչը գտաւ սրա հաւճաթ համարը հաստատ

Չորս հազար չորսը հարիւր եօթանասուն երեք հաս,

երեք վանկ է և եօթն գիր, իսկ անունը Մահմադ,

Կարդաց գրեց շարադրեց փոքրիկ բութատան արեց:

Ազւանը որ այս մուհամի բացարութիւնը տեց Վարադրատը և թագունին առաջ եկան և ասեցին թէ հիմա էլ թող Ազւանը առաջ ասէ, նա բացարութիւն տայ, շահր ասաց իհարկէ կարգը այդպէս է, քանի որ իրար չեն յաղթել պիտի հերթով ասեն և առաջարկեցին Ազւանին որ երգէ և երգեց այսպէս:

Ա դ ւ ա ն ը

Այն ինչ վաճառական է, որ ձրի կտայ փող չի տանի,

Մահմանում է, բայց յետ մահւան կրկին

յարութիւն կաննի,
 Շանօթ է ամբողջ աշխարհին իւր նման
 ընկեր չունի,
 Ինչ հասակով որ ծնւի նոյն հասակով
 կմեռնի:

Աշուղ Չուլալը կօյնաւ, շահը ասաց բացա-
 արութիւն տուր. Չուլալը ասաց՝ թող մի ան-
 դամ երեք տունը ասէ նոր ես միասին բացա-
 արեմ, Աղւանը սկսեց միւս տունը:

Շատ հին ժամանակէլ բան է երկար
 ժամանակ չունի

Մահանալու վերջ տալու երբէք նա քա-
 նակ չունի,

Համ խիստ մեծ է համ փոքր է միակամ
 բանակ չունի,

Իսկ թեաւոր թռչունի պէս առանցի թե
 կթռչի:

Երեք վանկ է և եօթը գիր, սկիզբը
 կամար ունի,

Տասնհազար յիսուն և ութ հաշիւով
 համար ունի

Ասեմ յատուկ կազմւած է, հինգ վեց
 գումար ունի,

Աղւանը ասում մարդ եմ ուղում,

Գոկապէս սրան բռնի:

Այս պահումսը ասաց Աղւանը և սազը ցած
 գրեց, իսկ աշուղ Չուլալը իւր տասներկու աշա-
 կերտով սկսեցին ման գալ, շատ աշխատան, բայց
 չգուր անցաւ, չկարողացան բացատրութիւն տալ,
 սազերը ցած գրին լուան մնացին: Նատրշահը
 դարձեալ ասաց Աղւանին. ուրեմն դու տուր քո
 պահուստիդ բացատրութիւնը տեսնենք հաւանա-
 կան է թէ ոչ. եթէ հաւանական է նրանց գլուխ-
 ները կգարկեմ, եթէ ոչ քո գլուխը կղարկեմ ան-
 պատճառ: Աղւանը սկսեց բացատրել իւր երգի
 միտքը.

Այդ վաճառականը լուսին է որ լոյս կտայ
 փող չի առնի

Երբ երեսուն օր լրանում է կրկին նորութիւն
 կառնի,

Բոլոր ամբողջ փիլիսօփէք սրանով են գործ
 վարում,

Ահա այս է աշխարհի մէջ ամեն բանը
 կխառնի:

Աղամից առաջ է եղել մեր լուանի դասուցը,
 Մինչև հիմա, չէ լրացել իսկապէս

քառասունքը,
 Մեծանում և փոքրանում է մի տեսակ է

մատուցը,

Արևելքից գէպի արեմուտք առանց թևի
կթռնի:

Երեք վանկ է և եօթը գիր, սկիզբը կամար ունի,
Տասնհազար յիսունևութ հաշիւով համար ունի,
Ասեմ յատուկ հաստաաւած է, հինգը վեց

գումար ունի,

Աղւանն ասում այս պահուստը խելք ու

մտքով ըմբռնի:

Աղւանի այս բացատրութեանը բոլորն էլ
հաւանութիւն աւեցին, որ ուղիղ բանէ. նոյն
կէտին շահը հրամայեց դահիճներին, որ աշուղ
Ջուլայի և իւր ընկերների գլուխները զարկեն,
բայց շահի նախարարները միջամտեցին որ խնայէ
և չը զարկէ նրանց գլուխները: Իսկ Վարազդա-
տը, որ աշխարհի խաղաղութիւնը չէր սիրում,
մէջ մտաւ և անայ՝ այստեղ խնդիր-մնդիր հար-
կաւոր չէ, շահի վճիռը պիտի կատարի, եթէ
խնդրուող էիք, թող առաջուց անէիք, որ ոչ մէ-
կի համար էլ մահուան վճիռ չլինէր, եթէ Աղւա-
նը տակը մնար, այն ժամանակ խնդրուող չէր
վնի նրա համար. ուրեմն երևում է, զուր ար-
գաստը. ուր էք անում այդտեղ: Շահը անաս-
ուր բան էր և զառնում, ասաց՝ ամենեին

խօսք հարկաւոր չէ. իմ վճիռը պիտի կատարի:
Այն բոլորին, աշուղ Ջուլայի և իւր տասներկու
աշակերտի գլուխները զարկել աւեց, և Նազրիկ
տիկնոջը ասաց՝ այս աղէն ու աղջիկը տար ձեր
տունը պահէ, մինչև որ ես նրանց կաթուղիկոսը
բերել տամ, որ գայ և գրանց պսակն անէ, իսկ
Նազրիկ խանումը, աղային և աղջկան աարաւ իր
տուն և սկսեցին կեր ու խում և ուրախութիւն
անել, որպէս թէ ազատեցան, բայց չէին գի-
տում թէ Նատրշահը թոյն է հաւաքել վիշապի
նման և կամի թափել նրանց վրայ, իսկ այդ
նպատակով էլ շահը հրովարտակ գրեց էջմիածնի
կաթուղիկոսին թէ այսինչ ժամանակին գու-
լինքդ տասներկու եպիսկոպոսով պէտք է ներկա-
յանաս ինձ մօտ վասն հարկաւոր գործի: Մի-
կնայն կերպով, Նատրշահը մի գիր էլ ուղարկեց
Օսանի հայր Սատխրէկի յետեից, որ նա էլ ան-
ձամբ ներկայանայ այնտեղ իւր ժամանակին:

Բայց երբ որ հրովարտակը հասաւ վեհափառ
կաթուղիկոսին, նա հաստատ հասկացաւ, որ մի
չարութիւն ունի գործելու: Թէքիրտաղի առաջ-
նորդ Արրահամ կրէտացին էր այդ ժամանակեայ
կաթուղիկոսը, վեր առնելով իր հետ տասներկու
եպիսկոպոս, ուղևորեցին գէպի Սպահան քա-

ղաքը և այնտեղ ներկայացան թագաւորին:

Ներկայացել էր այդտեղ Օսանի հայրը Սա-
տրիբէկը: Նատրշահը հրաւիրեց բոլորին ասեան
և կիսասիրտ բարեւեց կաթուղիկոսին և ասաց՝
ձեզ նրա համար եմ բերել այստեղ, որ մի հայ
տղայի մի մահմեդական անղջիկ է փախցրել և
ես իրաւունք եմ տալիս, որ անձամբ այդ պսակը
կատարես. թէև ինձ հակառակ է այդ բանը, բայց
պէտք է կարգով լինի, որովհետև մեզանից վեր
և բարձր—թագաւորաց թագաւոր Ասուած կայ
երկնքումը: Նա չէ հարցնում երբէք, թագաւոր,
իշխան, հարուստ կամ ազրատ. ասնաստրակ ա-
նիրաւ մարդիկ կըատէ, սրտ համար ես էլ իմ
ժողովրդի մէջ շոկոզութիւն չեմ գցում և բոլո-
րին մի աչքով եմ նայում: Ահա այդ պատճա-
ռաւ այն անցեալներում ես սիրելի աշուղիս իր
տասներկու աշակերտով սուրը քաշեցի, և եթէ
իմ աշուղներս թողած այդ տղայի գլուխը զար-
կել տայի, այն ժամանակ կվնասէր ինձ Ասուած
բարիութեամբ, հիմա ձերն է, դուք հպարտ հա-
յերդ, շատ սուտ ու մտտի բաներով խաբում
և որսում էք մարդկանց և դարձեալ տարածել
էք, թէ Քրիստոս ահագին Յորդանան գետը
կանգնեցրեց, և իբրև թէ Պետրոս կաթուղիկոսը

նոյնպէս զեաը ետ դարձրեց. այսպիսի կարգից
դուրս շատ հպարտութիւն և պարծանքներ ունիք,
որքան որ արեցիք բաւական է, իսկ այժմ այդ
սուտ ու փութ պարծանաց վերջն է: Առաւօտը
գու քս տասներկու եպիսկոպոսով պէտք է այն
տղէն և աղջիկը Գայլագետի մէջ պսակէք, եթէ
ոչ, երդում կուտամ իմ նախնիքների անունով
որ հայ անունն այս աշխարհի երեսից ջնջեմ բո-
լորովին: Ահա այս է իմ վճիռը, որ առաւօտուն
անպատճառ պէտք է կատարի. դէ պնացէք,
ձեզ համար ինչ որ անելու էք, շուտով արէք:

Այս հրամանը ստանալուց յետոյ կաթուղի-
կոսը դուրս ելաւ արքունի պալատից արտում
ու ախուր սրտով: Նատրշահի վճիռն յայտնեց
բոլոր հայերին և կարծես թէ խեղճ հայերի արե-
զակը խաւարաւ և յոյսերը մարաւ, որովհետև
այդ Գայլագետը մի ահագին ջուր է, նոյնիսկ գո-
մէջ և ուղա չի կարողանում անցնել, անցնում
են մարդիկ լատով ու նաւով. էլ ինչպէս կա-
րող է մարդ կանգնել այդ ջրի մէջ և կենդանի
ազաւել: Այդ բանի համար կաթուղիկոսը գան-
գերը քաշել աւեց և բոլոր հայերը միասին հա-
ւաքեցին եկեղեցին, արք և կանայք, ծերք և
տղայք, մեծ և փոքր սկսեցին արցո ք թագաւոր-
լալ և սղալ իւրեանց տարաբաղդութեան վրայ:

Իսկ վեհափառ կաթողիկոսը ճաճանչափայլ տխրաչր ձեռքն առնելով սկսեց պատշաճին ատենարանութիւն անել, առնելով Դաւիթ մարգարէից որ ասում է թէ Յրաւ տէր ձայնի լալոյ իմոյ, բաւ տէր աղօթից իմոյ և տէր զխնդրեալս իմ ընկալաւ» և աւելացրեց թէ Աստուած առաջ լալու ձայնը կլսէ, յետոյ աղօթքի, ուրեմն աղօթքի հետ հարկաւոր է լալ և սգալ:

Ահաւասիկ Նատրշահը վճռել է, որ հայ անունը աշխարհից ջնջէ, այդ վճիռն ինչով պիտի քանդուի, եթէ ոչ լալով, որովհետև մեր տէր և ստեղծող Աստուածը միշտ ողորմած է և զթած է երկայնամիտ, բարերար, անյիշաչար է, նա մինչև անգամ իւր տւած վճիւրը կքանդէ նայելով զզջման և աղէքսանաց. ուստի տամ ձեզ օրինակ կատարեալներից մի քանիսը. առաջինը, որ եղէկիա թագաւորին ասացին թէ՛ իննը ժամ է մնացել, որ հոգիդ աւանդես, նա սկսեց ջերմեռանդ սրտիւ ապաշխարել, լալ և սգալ մինչև վեցերորդ ժամը: Աստուած ընդունեց նորա զզջումը, տասնուհինգ տարի ևս կեանք պարգեւեց նրան. բայց երբ նա չհաւատաց այդ մարգարէի խօսքին թէ, Աստուած իւր տւած վճիւրը չէ քանդում և օրինակ ցոյց տալով թէ անաւասիկ արեգակը ետ դառնայ, իմ հոգիս էլ ետ կգառ-

նայ, նոյն րոպէին արեգակը ետ դառաւ և Աստուծոյ սքանչելիքը երևաց ի մէջ աշխարհիս: Երկրորդը՝ Դաւիթ մարգարէն, որ մեղանչեց Աստուծոյ դէմը, Աստուած երեք օր մահ վճեց նրա ժողովրդին: Բայց Դաւիթի զզջման համաձայն, երեք օրը երեք ժամ դարձրեց և իւր վճիւրը դարձեալ քանդեց:

Երրորդը՝ Աստուած վճռել էր, որ Նինուէ քաղաքը կործանէր, բայց երբ ժողովուրդն ապաշխարեց ջերմեռանդ սրտով, լացեց և արցունք թափեց, Նա էլ խնայեց և չկործանեց: Չորրորդը՝ Բարսեղ հայրապետի ժամանակ մի երիտասարդ խաբւելով զիւանքներից և ձեռագիրը տալով հոգին վաճառել էր նոցա և խոստացել էր, որ երբէք ծունր չդնէ Աստուծուն և Նորա անունն իւր բերնով չյիշի: Երբ որ Բարսեղ հայրապետն այս բանն իմացաւ, քարոզելով և խօսելով այդ տղային դարձրեց դէպի լոյս Աստուածը, բայց զիւանքը վերեկից ձեռագիրը ցոյց տալով ասում էին թէ, Բարսիլէ, Բարսիլէ, այս զրի և թղթի զօրութիւնով դարձեալ մենք դորա հոգին կտանենք ժամանակին, իսկ ս. հայրապետը հրամայեց, ժողովուրդը շոքաւ և բազկատարած տէր ողորմեայ արեց: Աստուծոյ հրամանով թուղթը պատուեց և ցած ընկաւ զիւանքների ձեռքից և

խեղճ երիտասարդի հոգին ազատեց, Անտասիկ
 նկատեցէք և տեսէք թէ որքան ուժ ունի
 լալը, զգլումը, շերմեանդ աղօթքը և մա-
 նաւաւդ տէր ողորմեան: Աւրեմն բոլորդ չոքէք,
 բազկատարած աէր ողորմեայ արէք, որպէս զի
 Մարդասէրն ազատեցէ զմեզ ի ձեռաց անօրէն
 պարսից: Սրանից յետոյ բոլորը միասին ծնկա-
 շոք և ողբաձայն սկսեցին տէր ողորմեայ աներ
 հետևեալ խօսքերով:

Ազաչում ենք, արի Աստուած,
 Ողորմած անճարի Աստուած.
 Մի խփիր մեզի քարի Աստուած,
 Տուր մեզ նշան բարի Աստուած:

Տէր ողորմեայ, տէր ողորմեայ, տէր ողորմեայ-
 Բարկացել է մեծ դատաւոր,
 Մեզ տանում է զէպ ջրի խոր,
 Զնջել կամի հայքը բոլոր,
 Տոյց սուր խաչելութեան շնորհ:

Տէր ողորմեայ, տէր ողորմեայ, տէր ողորմեայ-
 Սուրբ անունդ բարերարայ,
 Ողորմած անյիշաչարայ,
 Դատաստանդ միշտ արդարայ,
 Ազգիս հայոց զու այց արա:

Տէր ողորմեայ, տէր ողորմեայ, տէր ողորմեայ-
 Այսպէս ողբալով հսկում արեցին ողջ զի-

շերն անքուն, մինչև առաւօտ լացին և արտա-
 սուք թափեցին: Բայց Աղւանը և Օսանը հա-
 մարեայ թէ կիսակենդան եղան և լալով ասում
 էին, թէ բոլոր ազգի անմեղ արեան պատճառ
 դառանք, այս պատճառաւ երկուսը միասին ելան
 ծածուկ գնացին զէպի Գայլազեար, որպէս զի
 իրանք իրանց զցեն գետը և խեղդաման լինեն,
 ու մնացած ժողովուրդն ազատի: Երբ գնացին
 հասան գետի ափը, գարնանային ժամանակ էր,
 տեսան, որ գետը պղտոր և վրփրոտ է, կուտակ
 գալիս էր այնպէս, որ մինչև անգամ ուզում էր
 երկնքի թռչունքը վեր բերել, օձապտոյտ վիշա-
 պի նման գոռալով, սար ու ձոր թնդացնելով
 շարունակում է իւր ընթացքը:

Աղւանն ու Օսանը կամեցան իրենց զցել
 գետը, բայց կեանքը շատ անուշ է, շատ դժու-
 րացան. այդտեղ եռանդի գալով Աղւանն ասաց
 Օսանին՝ կաց, երկու խօսք եկաւ բերանս, ասեմ,
 յետոյ մեզ զցենք շուրը և սկսեց երգել հետևե-
 եալ աղերսալի երգը:

Ա. դ. ւ. ա. ն. ը

Ով սուրբ թագաւորաց թագաւոր Աստուած,
 Փրկութեան հնարը քեզ մնաց այսօր,
 Սերովբէք Քերովբէք անմահ արարած,
 Օգնութեան հնարը ձեզ մնաց այսօր:

Օ ս ա ն ը

Ով սուրբ Աստուածածին, ս. անարատ կոյս,
Ազատելուս ճարը քեզ մնաց այսօր,
Կոյսը խառտելուս խաչեցեալ Յիսուս,
Ազատելուս ճարը քեզ մնաց այսօր:

Ա գ ւ ա ն ը

Գայլաղետը մեզի արեց յուսահատ,
Ուզում է որ կուլ տայ բոլորիս հաստատ,
Ով սուրբ Քրիզոստոմ Կոստանդնուպոլսեաց,
Փրկութեան հնարը քեզ մնաց այսօր:

Օ ս ա ն ը

Կալիս եմ ողբալով սիրահարիս հետ,
Յովհաննէս-Մկրտիչ, էն սուրբ կարապետ,
Սուրբ Սարգիս, սուրբ Գէորգ, Վարդան
գորապետ,

Ազատելուս ճարը ձեզ մնաց այսօր:

Ա գ ւ ա ն ը

Այդ գետի մէջ պիտի լինի մեր պսակ,
Վարդան Վահան և Մուշեղի հայր Վասակ,
Մանկունք երբայեցօց, Սեդրակ և Մխաբ,
Փրկելու հնարը ձեզ մնաց այսօր:

Օ ս ա ն ը

Մեր վշտերից սարերն հալան ու մաշան,
Սանահնու, Հաղբատու սարի սուրբ Նշան,
Վառվառէ, Ուստիան, Սանդուխտ ու Շուշան:

Ազատելուս ճարը ձեզ մնաց այսօր:

Ա գ ւ ա ն ը

Մեղաւոր Ազանն եմ աղաղակ,
Հասէք օրնութեան սրբեր բովանդակ,
Մելիքսէթ, Աբրահամ, Յակօբ, սուրբ Սահակ,
Օգնութեան հնարը ձեզ մնաց այսօր:

Օ ս ա ն ը

Յղճալի Օսանն եմ, մոլորւած մնացի,
Սրբութիւն Սրբոց կանչելով լացի,
Սուրբ Մեսրօբ թարգմանիչ, ս. Նարեկացի,
Ազատութեան ճարը ձեզ մնաց այսօր:

Այս երգից յետոյ եկաւ կաթողիկոսը եպիս-
օպոստոսներով և բազմաթիւ ժողովուրդը, խաչվառ
աւետարան ձեռները բռնած անդաստան անե-
լով, սաղմոս և շարական կարդալով, ողբալով,
լալով և արտասունք թափելով եկան գետի ափը
կանգնան, իսկ Նատրշահն իր բոլոր նախարար-
ներով, պալատականներով, խաներով, բէկերով
և յիսուների շափ իւրեանց հոգևորականներով,
այսինքն՝ դադի, մուֆտա, սէյիդ և խունդ, մոլլայ
և այլն հետն առնելով, եկան գետի ափը աթու-
ները դրեցին և նստան. նոյնպէս նստաւ այդ-
տեղ նրանց մօտ Օսանի հայրը Մատիքէկը, որ
իւր աղջկայ կատարածը տեսնի:

Այժմ դու տես այդ տեղի զրութիւնը խըղ-

ճալի հայերն արիւն արատառնք թափելով լալիս էին, իսկ պարսիկները նրանց վրայ կատակ անելով ծիծաղում էին և հայերի կայքը ու կարողութիւնը բաժանում իրար վրայ, որովհետեւ հայերին վերջացած էին համարում և ոչ որի մտքիցը չէր անցնում թէ մարդ կազատի Գայլագետից: Այդ հանգամանգի մասին Վարազդատը բարկանալով ասաց մօտը եղող վարդկանցը՝ թէ այս ինչ հանդգնութիւն են անում. եկէք պատերազմենք զրանց հետ, որովհետեւ շատից շատ է գնում քչից քիչ: Այս բանը շուտով վեհափառին յայտնեցին և նա կանչելով Վարազդատին, խրատուսեց և համոզեց թէ՛ ես ձեզ ասում եմ աղօթք արէք, որ մեր տիրոջ խրատն է և համբերէք, տեսէք թէ զրանք այդ հպարտութեամբ Աստուծոյ դէմը ինչպէս պիտի ամօթանք կրեն: Դարձեալ ասեմ, որ զրանց հպարտութիւնն աւելի կօղնէ մեզ քան թէ մեր աղօթքը: Այսպիսով խողովեցրեց այդ վրդովմունքը և դարձեալ ձեռքն առաւ գետադարձ Պետրոս կաթողիկոսի ճաճանչափայլ ս. խաչը և լալով ասաց՝ բոլոր հայեր, Ասաւած կանչէք: Մէկից դռում գոչում ընկաւ ժողովրդի մէջ, իսկ սրբազան կաթողիկոսը լալով և աղօթքով ջուրը խաչակնքեց թէ չէ, Աստու հրամանով

գետը կանգնեց և ցամաքեց. աղջիկն ու սղէն կանգնեցին և Վարազդատն էլ խաչը բռնեց իբրև քար, իսկ կաթողիկոսն իւրատաներկու եպիսկոպոսով սկսեց պսակի խորհուրդը կատարել: Բայց երբ ասաց՝ «Եղիբ ի գլուխ նորայսակի քարէ պատուկան է», այն ժամանակ լուսափայլ և լուսեղէն պսակը ճառագայթով իջաւ գուգեալների գլխին, ի մեծ զարմանս ամբողջ բազմութեան և երբ որ պսակի խորհուրդն աւարտեցին և բաժակը տւեցին հարս ու փեսին ըմպելու, նոյնպէս մի լոյսով ցոլաց երկուսի բերանն էլ: Այս հրաշքը որ տեսան, բոլոր մահճեղականները զարմանալով ասացին՝ ճշմարիտ և արդար է հայոց կրօնքը. անա յայտնապէս ջուրը կանգնաւ, լուսեղէն պսակն իջաւ և լուսաւոր աստղը բերանները մտաւ: Նոյն կէտին Սատիբէկը մտաւ գետի մէջ և խնդրեց, որ իրան մկրտեն: Նա որ ելաւ Մուրադիանը մտաւ. վերջապէս հազարաւոր անձինք մահճեղականներից մկրտեցին և ապա կաթողիկոսը դուրս ելաւ ջրից և գետը առաջայ նման շարունակեց իւր ընթացքը: Նատրշահը տեսաւ, որ իւր բոլոր ազգը դառաւ քրիստոնեայ, դարձաւ դէպի իր զազի մուֆտիքը և ասաց՝ սկիզբը դուք եղաք պատճառ այս բանին և մեր ազգը բոլորը դառաւ քրիստոնեայ:

գուք էլ համեցէք այդ զեախ մէջ մտէք և հրաշք
ցոյց տւէք, որ հայերից էլ մի երկու հոգի ձեզ
ցանկանալով, ձեր կրօնքին դառնան: Իսկ նոքա
պատառխանեցին, թէ հայերի արածը զիւթական
հնարքներ և խարդախութիւն է, մենք կախաբ-
զական հնարք չենք գիտում: Շահր բարկու-
թեամբ ասաց՝ անիրաւ անպիտաններ, որքան
չարութիւն գործեցինք բաւական չէ՞, իսկ այժմ
կուգէք, որ ականատես ճշմարտութիւնն էլ սը-
տէք. իսկոյն Փառաշներին և սարգսզներին հրա-
մայեց, որ բռնի կերպով ջուրը թափեն դրանց,
որոնք թուով յիտուն հոգի էին և յիտուն հոգին
էլ այն ժամանակ ջրասոյգ եղան և մատաղ
գարձան լսող և իմացողներով ամեն:

Այս գէպքից յետոյ Նատրշահը մեղայ տալով
ըսկաւ կաթուղիկոսի ոտքերը և թողութիւն
խնդրեց իւր գործած յանցանքի համար և դար-
ձեալ բաւականին արտօնութիւններ շնորհեց
էջմիածնի վանքին և պայմաններով հաստատեց,
մի քանի գիւղեր և շայիրներ ընծայեց և իւր
ձեռամբ մի քանի շուշեղէն ջահեր առաւ և տա-
լով նոցա ասաց՝ տարէք այս ջահերը և կախեցէք
վանքի մէջ, թող միշտ վառի շարունակ այս բա-
նի և իմ յիշատակի համար, որոնք կան վանքում
կախած մինչև այսօր էլ ով որ ցանկանում է

թող ելթայ և աչքով տեսնի Նատրշահի ուղար-
կած ջահերը:

Սրանից յետոյ Նատրշահը կաթուղիկոսին և
բոլոր եպիսկոպոսներին ճաշի հրաւիրեց, իսկ
Մուրադխանը Օւանի հօրը, Վարազդատին, Օսա-
նին և Աղւանին սուն տարաւ, տեսան որ Նազ-
րիկ խանումը պատրաստել էր մի փառաւոր
սեղան, այնպէս որ ինչ Աստուած ստեղծել էր
սեղանի վրայ գտնուում էր՝ զառի, աղանուխո-
րոված, կողակ և իշխան ձկներ փուլած, կաթով
և վարդի ջրով թէյը պատրաստած, սեր ու մա-
ծուն, մեղր ու կարաք մաքուր ամաններով զրած,
տեսակ տեսակ ախորժեխի կերակուրներ սեղանի
վրայ շարւած և ամբողջ սեղանն առատօրէն
նոյնպէս և լի գաւերով կարմիր գինի և բոլոր
լսող և իմացող մարդկանց կեանքերը բարձր լի-
նի և սկսեցին ճաշ անել հրաւիրեալները հան-
դիսաւոր կերպով և չափազանց ուրախութեամբ
և այդ հանդէսի մէջ Աղւանը և Օսանը սկսեցին
երգով փառք և գոհութիւն մատուցանել ստեղ-
ծողին, որ ազատ արեց իրենց և ցոյց տւեց
այս սքանչելիքը ի մէջ աշխարհիս:

Աղւան

Ազատեցանք Գայլագետից,
Փառք քեզի ազատող Աստուած,

Եւ նորա թունաւոր նետից,
Փառք քեզի ազատող Ասուած:

Օ ս ա ն

Ազատեցանք նաարշահից,
Փառք քեզի ազատող Ասուած,
Փրկիչը մեզ փրկեց մահից,
Փառք քեզի ազատող Ասուած:

Ա . դ . ւ . ա . ն

Ազատեցանք մեծ փորձանքից,
Փորձանքից ու տառապանքից,
Չար թշնամու շար վտանդից,
Փառք քեզի ազատող Ասուած:

Օ ս ա ն

Սուրբ աղօթքով շուրն իջաւ,
Շահի բարկութիւնը զիջաւ,
Ծշմարիտ գործն առաջացաւ,
Փառք քեզի ազատող Ասուած:

Ա . դ . ւ . ա . ն

Հաստատ փայ վեհափառը,
Եզիսկոպտաներով խառը,
Կանաչեցաւ հայոց ծառը,
Փառք քեզի ազատող Ասուած:

Օ ս ա ն

Մեզի ազատեց սուրբ խաչը,
Եւ սուրբ հայրապետի օջր,

Անհաւարանների առաջը,
Փառք քեզի ազատող Ասուած:

Ա . դ . ւ . ա . ն

Աղանս արդէն կուրախանամ,
Ամեն տարի և ամեն ժամ,
Միշտ յիշելով Տիրոջ խնամ,
Փառք քեզի ազատող Ասուած:

Օ ս ա ն

Օսանն եմ, այս է իմ ջանքս,
Հազիւ կատարուաւ բաղձանքս,
Նպատակիս հասաւ կեանքս,
Փառք քեզի ազատող Ասուած:

Այս երգը վերջացրեց Օսանը և իւր սազը
ընծայեց իւր քաւոր Վարադդատին և ասաց՝
այսուհետև էլ ինձ հարկաւոր չէ սազը. արդէն
կատարեց իմ սրախ նպատակը և բաղձանքը:
Իսկ Սուրադխանը մի ամիս պահեց զբանց իւր
տան մէջ և պատուաւոր կերպով էլ հիւրասիրեց
նոցաւ: Բայց Սուրադխանին որ մկրտեցին, Պա-
պիկ իշխան անւանեցին, իսկ Սատխբէկին ան-
ւանեցին պարոն Մկրտիչ և այդ ամսից յետոյ
պատրաստութիւն տեսան գնալու: Օսանին զար-
դարեցին պեղեցիի հանդերձներով և թանկագին
զարդերով, բայց Օսանը վարդիօջիկներն ընծա-
յել էր Պապիկ իշխանը և երբ կամեցան Օսանի

զլուխը կապել և հանդերձները հազցնել, Աղ-
ւանն ասաց՝ սպասեցէք, մինչև որ ես իմ Օսա-
նիս հանդերձները գովաբանեմ և ապա հազցրէք
և սկսեց գովաբանել այսպէս:

Ասաւած սիրող ականջ արէք, լսեցէք,
Հանդերձները գովաբանեմ Օսանիս,
Ոսկեթել մազերը մէկ հուսեցէք,
Գովասանք արատաանեմ Օսանիս:

Ութսուն դանեկան է երեսի քօղը,
Իննսուն դանեկան ականջի օղը.

Ոսկի ճանոցն հինգ հազարի արժողը

Չուտ գոհարով արժան կանեմ Օսանիս:

Հազար դանեկան է քառամանեակը,

Հինգ հարիւր դանեկան մատանու աղը,

Չորս հարիւր դանեկան քամարն ու թաղը,

Իբրև ընծայ մատուցանեմ Օսանիս:

Տասերկու ձեռք հանդերձ կերպաս կարած

Հինգ հազար դանեկան յատուկին արած

Թանկագին բաճկոնը ծաղկով նկարած,

Երգ ու տաղով հազուցանեմ Օսանիս:

Երգ ու տաղով հազուցանեմ շապիկը,

Վարտիկը և մետաքսագործ կապիկը,

Վարդհօշիկները ընծայել է Պապիկը,

Ընծայարեք վարդարանն եմ Օսանիս:

Աղւանն եմ միշտ պահնպան Օսանիս:

Պարզեատուրութաստանն եմ Օսանիս

Այսուհետև նոր հարս անեմ Օսանիս

Դէպի Հայաստանը տանեմ Օսանիս:

Այս երգից յետոյ նոր Օսանի գլուխը կա-
պեցին և զարդերով զարդարեցին աննման գե-
ղեցիկ նոր մի հարս արեցին, այնպէս որ եօթը
տարւայ մահամերձ հիւանդը որ տեսնէր, իսկոյն
ողջանալով ոտքի վրայ կկայնէր: Վերջապէս
փողերը փչեցին, թմբուկները զարկեցին և երեք
հարիւր ձիաւոր հաւաքւեցան Օսանին տանելու:
Իսկ ձիաւորների գլխուօր Վարազդատը Օսա-
նին հեծուց ձին, և նրա հայր նոր Մկրտիչ
աղէն էլ ձին հեծած ընկաւ Օսանի առաջն իբրև
հարսնեղբայր և ուղևորեցին դէպի Հայաստան
երկիրը: Բայց այդքան ձիաւորների միջից այն-
պէս էր երևում Օսանը ինչպէս լուսինը ի մէջ
աստղերին: Այսպէս ուրախութեամբ և մեծ հան-
դիսով եկան հասան Հայաստան երկիրը. մնաց
մի աւուր ճանապարհ, որ հասնէին Վաղարշա-
կերտ աւանը: Այստեղ Աղւանը ձիաւորները
կայնեցրեց և ասաց՝ պէտք է, որ լրատու եր-
թայ իօրս մօտ, որ մեզ համար պատրաստու-
թիւն տեսնի. և բոլոր ձիաւորները մէկէն ընտ-
րեցին Վարազդատին, որ երթայ: Նա լի ախոր-
ժակով մի լաւ արաղ խմեց և կալազարի գլուխը

բաց թողեց, մի քանի ժամից յետոյ Մելիքշահա-
բազի գաւթումը իջաւ և հրաւիրուեցաւ վերի
յարկը, որտեղ նստած էր Մելիքշահաբազը իր նա-
խարարներով. Մատիբէկի և Օսանի առարկան
էին անում, որովհետև լսել էին ինչ որ պատա-
հել է Սպահան քաղաքում, կաթուղիկոսի արած
պատկը գետի մէջ, շահի հոգևորականների ջրա-
սոյգ լինելը և ամեն բան էլ լաւ թէ գէշ հաս-
կացել էին, իսկ Աղւանի մասին ամենևին տե-
ղեկութիւն չէին ստացել: Բայց Մելիքշահաբազը
ծածուկ ասել էր իւր կնոջը, որ տղէն չէ մե-
ռել, այլ կորել է և կինը միշտ լալով աղաչում
էր Աստծուն, որ մի տեղից գտնւի: Բայց մին-
չև այդ ժամանակը ոչ մի տեղից մի լուր չէր
ստացել. իսկ Վարազդատը տեսաւ որ մինչև ան-
գամ իւր որտեղացի լինելը չէին հարցնում, ո-
րովհետև օրական հարիւրաւոր անձինք գնացող
եկող էին և մինչև անգամ ամօթ էին համարում
հարցնել հիւրին թէ որտեղացի ես, Վարազդատը
նկատեց տեսաւ, որ հիմա ձիաւորները կգան,
դեռ ինքը ոչ մի լուր չէ հաղորդել դոցա. Մե-
լիքշահաբազը և իւր կինը միասին նստած էին,
ուստի Վարազդատը երգեց հետևեալ աւետաւոր
երգը:

Սրանի տամ ձեզ երանի

Ձեզ աւետիկ մեզ աւետիկ,

Հագուստներդ նուրբ ծիրանի,

Ձեզ աւետիկ մեզ աւետիկ:

Սկայ տալու ձեզ աչքալոյս,

Հանդիսաւոր ուրախ ժամոյս.

Իսկ ուրախութեան խրախոյս,

Ձեզ աւետիկ, մեզ աւետիկ:

Հարսանիք է այս իրիկուն,

Կազմելով մեծ ուրախութիւն.

Հանդիսաւոր էք հաստատուն,

Ձեզ աւետիք, մեզ աւետիք:

Մելիքշահաբազի կինը բաւականին հասկացող
էր և մինչև անգամ բանաստեղծ երգիչ էր, այս
խօսքերի վրայ զարմանալով ասաց մարդին՝ այս
խօսքերը թաքուն բան չեն և ս. հոգու ազդեցու-
թեամբ ասաց նա, մի գուցէ այս մարդը մեր
Աղւանից տեղեկութիւն ունի: Մելիքը ասաց՝
կաց տեսնենք, ես էլ զարմանում եմ դրա խօս-
քերի վերայ և դառնալով դէպի աշուղն ասաց
պարոն երգիչ, մենք ոչ տղայ ունենք կարգած
և ոչ աղջիկ, որ հարսանիք և հանդէս ունենանք
և դարձեալ զարմանում ենք ձեր աչքալոյս տալու
վերայ, որն որ մեզ չի պատկանի երբէք: Վա-
րազդատը ասաց՝ յետի խօսքիս մտիկ տուր:

Խնդառիթ օրերդ հասան

Կենդանի աչքերդ տեսան,
 Գալիս են Ադան ու Օսան,
 Ձեզ աչքալոյս մեզ աչքալոյս:
 Աղանին արինք թագաւոր,
 Վարագդատն եմ իսկ խաչքաւոր,
 Հաստատ բարեկամ եղանք նոր:
 Ձեզ աւետիք մեզ աւետիք:

Երբ որ Աղան անունը լսեցին մարդ ու
 կին, իրանց գցեցին դորա ոտքերի վերայ, որ այդ
 լուրը ուղիղ հաղորդէ իրանց, և նա ամեն բան
 կարգով հասկացրեց նրանց: Արդէն տունը ուրա-
 խութեամբ լցաւ, Մելիքշահաբազը չափազանց
 ուրախացաւ և Աստղիկ տիկինը ուրախութիւնից
 մինչև անգամ լաց եղաւ: Մելիքշահաբազը որ այդ
 գործի իսկութիւնը հասկացաւ, իսկոյն հրամայեց
 ամեն մի պատրաստութիւն տեսնել և փառաւոր
 սեղան պատրաստել գալով պատաւոր ձիաւոր-
 ների համար: Մինչև սրանք պատրաստութիւն
 տեսան, ձիաւորներն եկան և հանդիսաւոր կեր-
 պով հարսը բերին իջուցին: Այժմ դու տես
 Մելիքշահաբազի բոլոր զերգաստանի չափազանց
 ուրախութիւնը, էլ ով կարէ պատմել զրջով ու
 զրով այդ սէրը և զգլանքը, որ ցոյց աւեցին և
 ուրախացան ամբողջ դուռ ու զրկեց բարեկամ-
 ներով: Մելիքշահաբազը եռանդի գալով երգեց

այսպէս:

Արդէն ուրախ եմ չափազանց,
 Երջանկացած ի մէջ մարդկանց,
 Կորցրածս գտայ այսօր
 Իմ պանդուխտս եկաւ այսօր:
 Իմ պանդուխտս եկաւ ինձ հիւր,
 Ուրախացաւ սիրտս տխուր,
 Սուրբ սիրով ստացայ համբոյր,
 Կորցրածս գտայ այսօր:

Երգում եմ ես տաւոլու քնար,
 Մեծ աւետիք է ինձ համար,
 Ինչպէս մի վառւած սիրահար,
 Կորցրածս գտայ այսօր:
 Մելիքշահաբազն եմ փառք տալով,
 Եւ չափազանց ուրախանալով,
 Ստեղծողից գոհանալով
 Կորցրածս գտայ այսօր:

Իսկ մելիքշահաբազի կին Աստղիկ տիկինը
 մէկ թիւ քցել էր Աղանի վզովը և մէկը Օսանի,
 երբեմն տղայի երեսն էր համբուրում և երբեմն
 հարսի, այդպիսով նա չկարողացաւ իւր սրտի
 վառւած սիրոյ հուրը զովացնել. ուստի եռանդի
 գալով Աղանից սաղը խնդրեց և ձեռք առնե-
 լով երգեց հետևեալ երգը:

Ով դու իմ իշխանս թագաւոր տանս,

Միրելի Ազւանս դու բարով եկար,
 Նշխուն ծիածանս վարդ պատւականս
 Քանգակին Օսանս դու բարով եկար:

Այս էր նպատակս տեսայ հոգեակս
 Ծագեց արեգակ նորեց լուսնեակս
 Քանկագին թագս լուսատու. ակս

Իմ բախտ ու կրակս դու բարով եկար:

Աստղիկն եմ հաստատ երջանիկ եմ շատ,
 Յակովբին համեմատ Յովսէփս ազատ,
 Ով իմ արծաթապատ արքունի պալատ
 Գեղեցիկ նռան հատ դուն բարով եկար:

Այս երգից յետոյ Մելիքշահաբագը Մուրադ-
 խանի ձիաւորներին պատւաւոր կերպով և թան-
 կագին ընծաներով ճանապարհ դրեց, որոնք
 շնորհակալութեամբ յետ դառան գէպի Սպանան
 քաղաքը: Իսկ Օսանի հայրը երբ որ տուն հա-
 սաւ, իսկոյն մկրտել տւեց իր բոլոր գերդաս-
 տանը, ազգականները և բոլոր բարեկամները և
 դարձրեց քրիստոնեայ: Այնուհետև աւելի քաղց-
 րացաւ նորա սէրը Մելիքշահաբագի հետ և եր-
 կուսը միասին սկսեցին կատարել Ազւանի և
 Օսանի հարսանեաց հանդէսը: Իսկ հարսանեաց
 միջին, Օսանի մայր և Աստղիկ տիկինը գըր-
 կել էին Ազւանին և Օսանին և նստել էին ինչ-
 պէս հարս ու փեսայ և հաւաքուել էին նրանց

մօտը շատ կանայք, որոնք զարմանալով ապուշ
 էին մնացել Օսանի գեղեցկութեան վրայ և այդ
 պատճառով Օսանի մայրն Ազւանից խնդրեց, որ
 նա Օսանի գեղեցկութեան վրայ մի երգ ստէ, որ
 նստող կանայքն իմանան և աւելացրեց, թէ այս-
 քան ժամանակ երգում էիր օտար երկիրներում
 և այժմ մի երգ էլ այստեղ տաս, մենք էլ ձայնդ
 լսենք: Ազւանն սսաց. շատ լու. սսեմ, լսեցէք և
 սագն ձեռքն առաւ ու երգեց հետևեալ գովա-
 սանական երգը:

Ով իմ հոգի ջան սիրունի

Ընտիր պատւական սիրունի

Ծաղկած բուրաստան սիրունի

Նաշխուն ծիածան սիրունի:

Թանկագին Օսան սիրունի

Տամ քեզ գովասանք սիրունի

Գովեմ զանագան սիրունի

Շքեղ աննման սիրունի:

Լսէ դու իմ խրախուսին

Աչք ու ունքդ նորած լուսին

Գիտակներդ փռած ուսին

Երեսներդ իսկ արուսին:

Ուրախացիր դու այդ մասին

Միրաճարիդ հետ միասին

Մինչև ձերութեան օրհասին

Անփորձ անսասան սիրունի:
 Դու ինձ համար-արեզակ ես
 Անշամդաղ նոր լուսնեակ ես
 Տաքնուհնգած բոլորակ ես
 Եւ լուսատու աշամակ ես:

Գեղեցկութեամբ բովանդակ ես
 Խիստ քաղցրախօս սոխակ ես
 Կարմիր վարդ փունջ մանուշակ ես
 Անթառամ շուշան սիրունի:

Ով խնդառիթ բերկրանաց
 Եւ կենաց դրախտ նուենաց,
 Այսուհետեւ կամաց-կամաց
 Ուրախացիր բացէիբաց:

Նման էս երամ տաքակաց,
 Սրտով սիրահարիդ զխմաց
 Աղունիս հետ միշտ սիրով կաց,
 Մինչև ի վախճան սիրունիս:

Աղանի և Օսանի Լարսանիքը անեց մինչև
 քառասուն օր և քառասուն գիշեր. այնուհետև
 Աղանը և Օսանը երջանիկ ապրեցան և մինչև
 խորին ծերութեան հասան: Նրանք հասան իրանց
 նպատակին, դուք էլ հասնէք ձեր բաղձանքին: Տէրն
 է վարպետս, իսկական ձեռքիցս եկածն էր այս-
 քան: Տայ Աստուած, որ միշտ ունենաք երջանիկ
 կեանք և բարութեան ջանք: Յուսանք Տէրէն երկ-
 նային, որ նա օգնէ անտէրին: Ամեն եղիցի և եղիցի:



ՌԻՐԱՑՈՂ ՄԱՐԴԻ ՊՍՐԵՍԻԱՆՔԸ

Ուրացողը քեզ խափել կամի,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ,
 Վերջը պատիւդ թափել կամի,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:
 Մօտդ կգայ շողաքորթով,
 Երդում կուտայ իրա որդով,
 Քեզ կը խաբէ չար խորհրդով,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:
 Ինքն իրան արդար կձևայ,
 Ինչպէս օձը խաբեց Եւա.
 Ուրացողի երեսը սե ա,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:
 Ուրացող մարդն է թուք ու մուր,
 Երեսում չունի կենաց ջուր,
 Հեաը մի անէ առուտուր,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:
 Ուրացող մարդն է կեղծաւոր,
 Այդպիսին մի լինի քաւոր,
 Ոչ քաւոր, ոչ երաշխաւոր,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:
 Ուրացող մարդից հեռու կաց,
 Հեաը մի ուտէ աղ ու հաց,
 Քեզ ասում եմ բացէ ի բաց,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:

Ուրացողը չունի սահման,
 Երբէք նա յոյս չունի մահւան,
 Նորա հետ մի անէ պայման,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:

Ուրացող մարդը անգութ ա,
 Ուրացողն է մասնիչ Յուզա,
 Ուրացողի խօսքերը սուտ ա,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:

Ուրացող մարդն է ապակի,
 Սուտ ասելով կպապակի,
 Քովդ կգայ գլխին թակի,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:

Ուրացողը քեզ կսպասէ,
 Աղերսանօք խօսքեր կուտէ,
 Վերջը քեզի կմնասէ,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:

Ուրացողը մի տեսակ բան է,
 Սկիզբը քեզ պատիւ կանէ,
 Վերջը շորերդ կը հանէ,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:

Ուրացողի սիրաւ քար է,
 Լեզուն քաղցր, միտքը չար է,
 Սոված գայլին հաւատար է,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:

Երբէք չի կշտանայ փորը,
 Միշտ գատաարկ է ցորնի հորը,

Թէկուզ լցւի սարն ու ձորը,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:

Ուրացողն է ընկեր չարին,
 Անհամեմատ է արգարին,
 Մարդ խաբելով կանցու տարին,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:

Ուրացող մարդից յետ փախիր,
 Սուրբ հոգիդ նրանից պահիր,
 Թէ մարդ ես հոգուցդ վախիր,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:

Ուրացողից դնա դու գատ,
 Ուրացող մարդն է անհուտա,
 Շատ է խաբել քեզ նման շատ,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:

Ուրացող մարդն է այլ ու այլ,
 Միշտ քշում է թշնամու սայլ,
 Ման կգայ ինչպէս սոված գայլ,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:

Ուրացող մարդն է խաբերայ,
 Ասուածութիւն երես ափայ,
 Քարէ կարկուտ գլխին խփայ,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:

Յովսէփիս գանգատը շատ ա,
 Ուրացողը Կայէնից վատ ա,
 Ամեն հոգուն մի հաւատայ,
 Կուզէ մի տայ, կառնի չի տայ:

Դ Ա Ս Տ Ա

Առանցի շուր շրաղացի դէմ,
Եղած չեղած մէկ հաշիւ է,
Նապաստակ առիւծի դէմ,
Եղած չեղած մէկ հաշիւ է:

Բոլոր բամբասանաց լուրը,
Քնած մարդիկնզէնք ու սուրը,
Սոված փորին սարի շուրը,
Եղած չեղած մէկ հաշիւ է:

Սէր չունեցող սիրականը,
Թրթուրակեր բուրաստանը,
Թերի մնացած պայմանը,
Եղած չեղած մէկ հաշիւ է:

Խեղճ ու խելագար անմիտը,
Զգիտնալով խօսքի կէտը,
Խոզի համար մարգարիտը,
Եղած չեղած մէկ հաշիւ է:

Կեղծաւորի ժամ գնալը,
Փարիսեցու նման լալը,
Հպարտ հպարտ մեղայ տալը,
Եղած չեղած մէկ հաշիւ է:

Յովսէփիս մեծ աշխատանքը,
Զուր արարիչ արամ զգանքը,
Անգէտ մարդի գովասանքը,
Եղած չեղած մէկ հաշիւ է:



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՆՍԵՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՆՍԵՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՆՍԵՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՆՍԵՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- | | | |
|-------------------|-----------|------------|
| 1. ԱՂԻԱՆ ԵՒ ՕՍԱՆ | | 2 ր. 50 Կ. |
| 2. ԱՄՐԱՀ ԵՒ ՍԱԼՎԻ | | 60 Կ. |
| 3. ԳԱՌՆԻԿ | | 60 Կ. |
| 4. ՄԵԼԻՔ-ԱԲՈՎ | | 60 Կ. |

ԳՈՒՄԱՐՈՎ ԳՆՈՂՆԵՐԻՆ ԱՌԱՆՁԻՆ ԶԵՂՁ
ԿՐԼԻՆԻ

ԴԻՃԵԼ՝ Эривань. Тагіаносу Тагіаносянцу.

2013

14700

